Distribution of arsenic in the ores of stockwork. Close association of copper-arsenic sulfosalts with chalcopyrite conditions their transition during flotation together with chalcopyrite into copper concentrate with average content of 0.5% (Агамирян и др., 1985). Exceeding of these contents in copper concentrates in 1990 made it necessary to single out on the deposit the sites with content of As in the ores of 0.1-1% and mapping them (Таян и др., 1991). It should be noted that before that in the ores of overlying horizons the contents of arsenic up to 0.1% were rarely observed (Фарамазян, 1974). When drawing up single-element maps (Таян и др., 1991) it was considered appropriate to single out 5 classes of As contents: 0.005%; 0.005-0.05%; 0.05-0.15%; 0.15-0.30%, and >0.30%. The data on the As content in ores were summarized by us according to the general plan of the mine 1: 2000, which combines 3 horizons of the deposit - 2005, 1985, 1965m (fig.1).

The scheme of distribution of arsenic drafted by us illustrated the prevailing development of ores of the first class contents – 0.005 %. The ores exceeding these contents were located within the fields of the first class by local islets. The largest contrasting anomaly with an area of about 1200m², represented by thickening of isolines, reflecting 3-4 classes of contents, was observed in the northern part of the deposit and had a sublatitudinally elongated shape; to the east it was traced by two branches of the northeastern direction. Less contrasting anomalies to the south of this zone, represented by 2-3 classes of contents, and occupying small areas up to 600m², were also characterized by elongation in the sublatitudinal, less often in the northeastern direction.

Besides them, anomalies of arsenic of small area, of the same intensity, oriented in the submeridional direction were distinguished. The research allowed evaluating the contamination of the deposit ores by arsenic. According to recommendations given upon completion of the work two operational units were identified in the northeastern part of the deposit, enriched in copper-arsenic sulfosalts with contents of As >0.05% with sites of enrichment up to 0.3%. It was estimated that with proper ore blending with the prevailing distribution of ores with classes of contents less than 0.05%, these contents do not have a significant impact on the quality of copper concentrates and do not exceed the contents of As up to 0.3% acceptable in them (Таян и др., 1991).




Fig.1. Generalised 3 horizon schematic map of arsenic anomalies for Kadjaran open pit (in WGS 84 coordinate system)

Geological interpretation of sublatitudinal anomaly of arsenic of the northern section showed that it is tied to the longest – up to 800m and deepest quartz-molybdenite vein N6 on the deposit (traced to the horizon of 1840m) (Мкртчян и др., 1969); both in terms of the area and of the intensity, an increase of anomalies is observed from west to east, with fixation of sites of vein expansion. Increase eastward in the vein mass of spotty and nested segregations of chalcopyrite, pyrite, sphalerite and galena, quite often veinlets, along with black fine-grained cryptocrystalline quartz of brecciated structure, in which fragments of white quartz with molybdenite are observed, speaks of sequential fragmentation and «grouting» of the early mineral associations by the later ones (Мкртчян и др., 1969). The nature of the halo of arsenic anomaly, accompanying the formation of the vein and its branches all over, suggests that metal deposition occurred from one and the same solution when reopening the latitudinally oriented localizing structure, complicated in the eastern part by the structures of northeastern strike.

Relatively contrasting anomalies of As, recorded to the south of the 6th vein, are associated with the areas of intensive veining of quartz-chalcopyrite and quartz-molybdenite-chalcopyrite stages. In addition to them, anomalies close to quartz-polymetallic veins are also observed, that is mainly observed on the southeastern flank of the deposit.




Fig.2. Numerous relics of chalcopyrite in the field of bornite testify to the metasomatic formation of the latter and displacement of arsenic component to the periphery.

Association of enargite with chalcosine, bornite and covellite in bakelites of copper concentrates, in addition to assessing the quality of concentrates, contributed to the identification of associative links of arsenic with other minerals except chalcopyrite (Таян и др., 1991). This allowed linking small anomalies of arsenic with zones of limonitization, developing in areas of steeply dipping meridional faults. In the absence in the zone of supergenesis of clearly defined zone of secondary sulfide enrichment (Акопян, 1960; Мовсесян, Исаенко, 1974; Фарамазян, 1974), development of minerals of secondary sulfide enrichment along fractures was observed by researchers up to the depth of 200m (Акопян, 1960; Пиджян, 1975). According to our research the minerals of secondary sulfide enrichment zone were traced up to the horizon of 1965m (fig.2).

Quantitative distribution of As in monomineral fractions of chalcopyrite, molybdenite, pyrite, selected from the horizons enriched by arsenic, is illustrated in fig.3. The average contents are shown in the table 1. It should be noted the difficulty of comparability of diverse analysis of arsenic, carried out in different years by laboratories with various technological and analytical equipment.

Table 1.

Distribution of arsenic in basic sulphides of Kadjaran deposit

Minerals	Number of samples	X	S	V
Chalcopyrite	18	0.13	0.16	123
Molybdenite	25	0.01	0.007	70
Pyrite	16	0.0348	0.037	106

Note: X – arithmetical mean; S – standard deviation; V – coefficient of variation

In molybdenites the contents of As range within 0.008-0.018%; in the most part of molybdenites hundredths of a percent of As are observed (fig.3).




Fig.3. The nature of distribution of arsenic in chalcopyrites, molybdenites and pyrites (in %).

More stable distribution of arsenic was observed in the upper horizons by A.S. Pharamazyan (1974), moreover, in molybdenites of different generations – 0.01-0.03%. Chalcopyrites and pyrites of the mentioned horizons in comparison with the data of A.S. Pharamazyan (1974) show relative enrichment in As: chalcopyrites – 0.01 – 0.60% (0.01-0.3% acc. to A.S. Pharamazyan), pyrites – 0.01-0.14% (0.01-0.1%) wherein, both in chalcopyrites and in pyrites As is mostly represented by hundredths of a percent.

The study of the mineral composition of ores has shown that already from the horizon of 1935m in copper-molybdenum ores enargite is much less frequently observed, while tennantite occurs more often, as it was noted in earlier studies (Мовсесян, Исаенко, 1974).

A similar replacement of the near-surface associations with enargite-luzonite in the lower horizons with tennantite containing ones is described on the copper-porphyry gold bearing deposit of El Salvador in Chile, however in polymetallic Cp-Py-Sl-Gl associations (Einaudi et al., 2003). If in the upper horizons in Kadjaran copper-molybdenum and polymetallic ores along the edges of granular aggregates or individual crystals of enargite replacing chalcopyrite, a thin rim of tennantite is observed, then in the lower horizons the role of tennantite increases significantly.

Starting from the horizon of 1975m primary tennantite is observed in the association with chalcopyrite, not containing relics of foreign minerals, which forms more or less idiomorphic grains 0.1-0.2mm in size. The primary tennantite is also observed in chalcopyrite-molybdenite ores of the 6th quartz-molybdenite vein in the horizon of 1840m (fig.4).




Fig.4. Phenocryst of chalcopyrite (Cp) with tennantite (Tn). x 400. Quartz-molybdenite 6th vein. Horizon of 1840m.

Discussion and conclusions

Copper-arsenic sulfosalts are typical of the deposits of Cu-porphyry type ($\text{Cu/Mo} = 180\text{-}300$) of Western Mediterranean segment of Tethys-Eurasian metallogenic belt (Buchim, Zlatitsa-Plavitsa Majdanpek, Veliki Krivel, Bor, Asarel, Medet, etc.), and they are less typical of deposits of Eastern Mediterranean segment. In the ores of Cu-Mo porphyry deposits – Kadjaran, Agarak, Lichk, Aygedzor, Hankasar, Dastakert, Hankavan of Tsaghkunk-Zangezur zone of the Lesser Caucasus, of central part of Tethys-Eurasian metallogenic belt the presence of arsenic was observed by many researchers (Мовсисян, Исаенко, 1974; Пиджян, 1975; Карамян, 1978; Карапетян, 1982 и др.).

Our researches have been devoted to the study of nature of distribution of As in the ores of Kadjaran copper-molybdenum deposit to the depth, which allowed identifying the main features of its manifestation.

1. In vertical section of copper-molybdenum ores As is distributed unevenly; the near surface horizons rich in copper mineralization are depleted in As, and the identified interval of the horizons – 2005-1965m, enriched in As, is the average part in depth (the upper edge of industrial ores is 2300m, the lower one is 1450m). Copper-arsenic sulfosalts are observed in the mineral associations of all ore stages of Kadjaran deposit – quartz-molybdenite, quartz-molybdenite-chalcopyritic, quartz-chalcopyritic, quartz-pyritic, quartz-polymetallic, as noted by some researchers, only with predominant deposition in quartz-chalcopyritic stage (Акопян, 1960; Мкртчян и др., 1969; Фарамазян, 1974; Мовсисян, Исаенко, 1974; Пиджян, 1975).

It is interesting that in the scheme of generalized ore zoning of deposits of Cu -porphyry type (Sillitoe, 1993, 2010; Кривцов и др. 1986; Einaudi et al.,

2003), arsenic sulfosalts gravitate to the apical part of the ore system and are common in chalcopyrite-pyrite-hematite and galena-sphalerite-chalcopyrite-pyritic associations.

2. With background content of As 0.005%, local sites with contents of As 0.1-0.5%, are confined to the areas of intense manifestations of the stages not only productive on Cu, but also to the veins of quartz-polymetallic composition, which allows suggesting unlike the previous researchers (Мкртчян и др., 1969; Фарамазян, 1974) that a considerable part of copper-arsenic sulfosalts is in the mineral associations of this stage. No significant concentrations of arsenic in the upper horizons of 2145-2040m of Kadjaran deposit with great development of copper mineralization $Cu/Mo = 6.5-8.3$, compared to lower horizons, where $Cu/Mo = 5.0-4.4$ (Таян и др., 2003), indicates the absence of correlations between migratory activities of Cu and As in ascending solutions.

3. The assumption of the vertical mineralogical zoning of deposition of arsenic sulfosalts in the ores of Kadjaran stockwork (Мовсесян, Исаенко, 1974) is completely confirmed by our researches. Up to 60-80m from the surface (stockwork of copper-molybdenum ores is traced from 2300 to 1450m) enargite and luzonite occur in rare grains in mineral associations with prevailing chalcopyrite; in the range of the horizons of 2200-2150m increase of the contents of enargite-luzonite is observed and tennantite appears; the prevailing role of tennantite among copper-arsenic sulfosalts is traced from the horizon of 1935m.

Deposition of luzonite, enargite and tennantite in the mentioned sequence during each ore stage (quartz-molybdenite-chalcopyritic, quartz-pyritic and quartz-polymetallic) speaks of a gradual replacement of oxidative conditions by reducing ones; displacement of enargite-luzonite association by tennantite to the depth testify to the more rapid increase in the recovery potential of ore formation environment in comparison with the upper horizons.

4. Between the basic sulfides of the deposit – molybdenite, chalcopyrite and pyrite, As is unevenly distributed. It is significant that even the highest contents of As in pyrites of Kadjaran deposit – 1400g/t do not exceed its average contents in pyrites of deposits of gold polymetallic formation of Zangezur Ore District – 5097 g/t (Таян и др., 2005), that allows moving out pyrite from the standpoint of formational analysis as mineral-indicator (Григорян, Ляхович, 2000) when assessing the geochemical anomalies.

The nature of distribution of arsenic along the vertical section of copper-molybdenum ores together with mineralogical zoning of deposition of copper-arsenic sulfosalts vertically, is one of the most important characteristics, which reflects the ore-geochemical profile of Kadjaran copper-molybdenum deposit. Further research will show according to the uniformity of the material composition of ores to what extent it may be extended to the other copper-molybdenum-porphyry deposits of Tsaghkunk-Zangezur zone.

Литература

- Агамирян К.А., Цамерян П.П., Карамян К.А.** 1985. Подсчет запасов Каджаранского медно-молибденового месторождения по состоянию на 01.04.1985г. (отчет о детальном разведочных работах Каджаранской ГРП Капанской ГРЭ за 1976-1985гг.). Ереван, Армгеолфонды.
- Акопян Е.А.** 1960. Минералогия зоны окисления главнейших медно-молибденовых месторождений Армении (Каджаран, Агарах, Дастакерт, Анкаван, Мисхана). Ереван, изд. АН АрмССР, 250с.
- Акопян М.С., Мелконян Р.Л., Маданян О.Г., Таян Р.Н., Искандарян Г.Г.** 1989. Новые данные о генезисе Каджаранского медно-молибденового месторождения. ДАН АрмССР, т. 89, Геохимия, с.26-29.
- Арутюнян М.А., Оганесян А.Е.** 2018. Распределение золота и серебра в рудах Каджаранского медно-молибденового месторождения. Изв. НАН РА, Науки о Земле, № 2, с.3-15.
- Арутюнян М.А., Таян Р.Н.** 2005. Минералого-геохимические критерии определения формационного типа сульфидных рудопоявлений. В кн.: "Рудные месторождения: вопросы происхождения и эволюции". Материалы IV Уральского металлогенического совещания. Миасс, изд. Илмен. Зап., с.21-23.
- Григорян С.В., Ляхович Т.Т.** 2000. Оценка геохимических аномалий по элементам-примесям в минералах. Методические рекомендации. Москва, полиграфическая база ИМГРЭ, 79с.
- Карамян К.А., Фарамазян А.С.** 1960. Стадии минерализации Каджаранского медно-молибденового месторождения. Изв. АН АрмССР, сер. геол.-географ. Наук, №3-4, с.65-88.
- Карамян К.А.** 1978. Геологическое строение, структура и условия образования медно-молибденовых месторождений Зангезурского рудного района. Ереван, изд. АН АрмССР, 178с.
- Карамян К.А.** 1981. Минеральные ассоциации и минералы месторождений Зангезурского рудного района. Ереван, изд. АН АрмССР, 227с.
- Карапегян А.И.** 1982. Эндогенные рудные формации Памбак-Зангезурской металлогенической зоны Малого Кавказа. Ереван, изд. АН АрмССР, 348с.
- Кривцов А.И., Мигачев И.Ф., Попов В.С.** 1986. Медно-порфировые месторождения мира. Москва, "Недра", 235с.
- Мелконян Р.Л., Моритц Р., Таян Р.Н., Селби Д., Гукасян Р.Х., Овакимян С.Э.** 2014. Главнейшие медно-порфировые системы Малого Кавказа. Изв.НАН РА, Науки о Земле, № 1, с.3-29.
- Мкртчян С.С., Карамян К.А., Аревшатян Т.А.** 1969. Каджаранское медно-молибденовое месторождение. Ереван, изд. АН АрмССР, 330с.
- Мовсесян С.А.** 1941. Пирдоуданское медно-молибденовое месторождение. Ереван, изд. Арм. ФАНа, 145с.
- Мовсесян С.А., Исаенко М.П.** 1974. Комплексные медно-молибденовые месторождения. Москва, "Недра", 345с.
- Пиджян Г.О.** 1960. К минералогии руд Каджаранского медно-молибденового месторождения. Изв. АН АрмССР, серия геол., № 2, с.31-50.
- Пиджян Г.О.** 1975. Медно-молибденовая формация руд АрмССР. Ереван, изд. АН АрмССР, 310с.
- Таян Р. Н.** 1984. Особенности развития разрывных структур Каджаранского рудного поля. Изв. АН АрмССР, Науки о Земле, № 3, с. 21-29.
- Таян Р.Н., Арутюнян М.А., Саркисян С.П.** 1991. Изучение геолого-структурных и минералого-геохимических условий локализации руд Каджаранского штокверка, как критерий распределения полезных компонентов и рационального их освоения (информационный отчет по договорной работе с Каджаранским ММК от 15 января 1990г.). Каджаран, Фонды ММК, 45с.
- Таян Р.Н., Саркисян С.П., Арутюнян М.А.** 2003. Особенности локализации медно-молибденового оруденения Южного Зангезура. Изв. НАН РА, Науки о Земле, №3, с.24-29.
- Таян Р.Н., Арутюнян М.А., Оганесян А.Е.** 2005. К вопросу размещения медно-молибденовой и золото-полиметаллической формаций Южного Зангезура и возможности

- идентификации рудопроявлений по элементам примесей в пиритах. Изв. НАН РА, Науки о Земле, №3, с.17-24.
- Фарамазян А.С.** 1958. К минералогии полиметаллических руд Каджаранского медно-молибденового месторождения. Изв. АН АрмССР, сер. геол.-географ. Наук, № 6, с.41-47.
- Фарамазян А.С.** 1974. Каджаранское медно-молибденовое месторождение. В кн.: Минералогия, геохимия и условия образования рудных месторождений Армянской ССР. Ереван, изд. АН АрмССР, с.145-250.
- Einaudi, M.T., Hedenquist, I.W. and Inan, E.E.** 2003. Sulfidation state of fluids in active and extinct hydrothermal systems: Transitions from porphyry to epithermal environments. Society of Economic Geologists Special Publication. 10, p.285-313.
- Hovakimyan S., Moritz R., Tayan R., Harutyunyan M., Rezeau H.** 24-27 August 2015. The world-class Kadjaran Mo-Cu-porphyry deposit, Southern Armenia, Lesser Caucasus: structural controls, mineral paragenesis and fluid evolution. In: Anne-Sylvie Andre-Mayer et al. (eds.), Mineral resources in a sustainable world, 13th SGA Biennial Meeting, France, Nancy v.1, p.295-298.
- Hovakimyan S., Moritz R., Tayan R., Melkonyan R. and Harutyunyan M.** 18th March 2016. Structural controls of major porphyry Cu-Mo and epithermal Au-polymetallic deposits during subduction to post-collisional evolution of the southernmost Lesser Caucasus, Armenia, Tethyan metallogenic belt. "Journée Métallogénique: Annual Meeting of Swiss Ore Deposit Geoscientists", University of Bern, Switzerland; Abstract volume, p.11.
- Hovakimyan S., Moritz R., Tayan R., Melkonyan R., Harutyunyan M.** 18-19 November 2016. Regional strike-slip tectonics and porphyry Cu-Mo and epithermal ore deposit formation during Cenozoic subduction to post-collisional evolution of the southernmost Lesser Caucasus, Tethyan belt. 14th Swiss Geoscience Meeting, Geneva, Switzerland, abstract volume, p.61-62.
- Hovakimyan S., Moritz R., Tayan R., Harutyunyan M., Rezeau H., Melkonyan R., Hovhannisyan A.** 2018. Tectonic setting of the Cenozoic Kadjaran porphyry Mo-Cu epithermal system, Armenia, Lesser Caucasus, Tethyan belt. 16th Swiss geoscience meeting, Bern, Abstract volume, p.111-112.
- Moritz R., Rezeau H., Ovtcharova M., Hovakimyan S., Chiaradia M., Tayan R., Melkonyan R., Ramazanov V., Ulianov A., Putlitz B.** 24- 27 August 2015. Tethyan subduction to post-subduction magmatic evolution and pulsed porphyry Cu-Mo deposit emplacement in the southernmost Lesser Caucasus. In: Anne-Sylvie André-Mayer et al. (eds), "Mineral resources in a sustainable world", 13th SGA Biennial Meeting, France, Nancy, v.1, p.145-148.
- Moritz R., Rezeau H., Ovtcharova M., Tayan R., Melkonyan R., Hovakimyan S., Ramazanov V., Selby D., Ulianov A., Chiaradia M., Putlitz B.** 2016. Long-lived, stationary magmatism and pulsed porphyry systems during Tethyan subduction to post-collision evolution in the southernmost Lesser Caucasus, Armenia and Nakhichevan. Gondwana Research, v. 37, p.465-503.
- Rezeau H., Moritz R., Wotzlav J-F., Hovakimyan S., Tayan R. and Selby D.** 24- 27 August 2015. Pulsed porphyry Cu-Mo formation during protracted pluton emplacement in Southern Armenia, Lesser Caucasus: the potential role of crustal melting for ore recycling. In: Anne-Sylvie André-Mayer et al. (eds), "Mineral resources in a sustainable world", 13th SGA Biennial Meeting, France, Nancy, v.1, p.343-346.
- Rezeau H.** 2017. Petrogenesis of the cenozoic Meghri-Ordubad pluton, southernmost Lesser Caucasus: Implications for the formation of large porphyry Cu-Mo systems during the Arabia-Eurasia accretionary orogenesis. Université de Genève. Section des sciences de la Terre et de l'environnement. Volum 139, 305p.
- Sillitoe R.H.** 1993. Epithermal models: Genetic types, geometrical controls and shallow features. *Geological Association of Canada - Special Paper* 40: p.403-417.
- Sillitoe R.H.** 2010. Porphyry Copper Systems. *Economic Geology*, v.105, p.3-41.

**ՄԿՆԴԵՂԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՔԱԶԱՐԱՆԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐՈՒՄ**

**Հարությունյան Մ.Ա., Հովհաննիսյան Ա.Ե., Մադաթյան Ն.Ի.,
Հովակիմյան Ս.Է., Միրադեղյան Վ.Վ.**

Ամփոփում

Պղինձ-մոլիբդեն պորֆիրային տիպի հանքավայրերի հանքաքանակ-երկրաքիմիական պրոֆիլը որոշվում է ոչ միայն պրոֆիլացնող մետաղների կոնցենտրացիայի մակարդակով, այլ նաև նրանց ուղեկցող երկրորդական մետաղների տեղաբաշխման առանձնահատկություններով: Քաջարանի հանքավայրի պղինձ-մոլիբդենային շտոքվերկում (արդյունաբերական հանքայնացման վերին սահմանը 2300մ բացարձակ բարձրություն, ներքինը՝ 1450մ) առանձնացված է միջին խորության հորիզոնների միջակայք՝ 2005-1965մ՝ հարստացված մկնդեղով, որտեղ մկնդեղը ունի 0,005% ֆոնային արժեքները, բայց առանձին տեղամասերում մկնդեղի արժեքները հասնում են մինչև 0.1-0.3%: Վերին հորիզոններից սկսած մինչև ուսումնասիրված 1840մ հորիզոնը, պղինձ-մկնդեղային սուլֆոաղերը հանդիպում են քվարց-մոլիբդենիտային, քվարց-մոլիբդենիտ-խալկոպիրիտային, քվարց-պիրիտային, քվարց-բազմամետաղային ստադիաներում, այսինքն հանքավայրի բոլոր հանքային ստադիաներում: Մկնդեղային սուլֆոաղերի նստեցման միներալոգիական ուղղահայաց գոտիականությունը, ըստ խորության, արտահայտվում է էնարգիտ-լյուցոնիտ պարունակող միներալների պարագենեզիսի հերթափոխով տենանտիտ պարունակողներով:

**ОСОБЕННОСТИ РАСПРЕДЕЛЕНИЯ МЫШЬЯКА В РУДАХ
КАДЖАРАНСКОГО МЕСТОРОЖДЕНИЯ**

**Арутюнян М.А., Оганесян А.Е., Магакьян Н.И.,
Овакимян С.Э., Сирадегян В.В.**

Резюме

Рудно-геохимический профиль месторождения медно-молибден-порфирового типа определяется не только уровнями концентрации профилирующих металлов, но и характером распределения сопутствующих им второстепенных металлов. В медно-молибденовом штокверке Каджаранского месторождения (абсолютная отметка верхней кромки промышленных руд 2300м, нижней 1450м) выделен средний по глубинности интервал горизонтов 2005-1965м обогащенный As; при фоновом содержании мышьяка 0,005% на отдельных участках, содержания As достигают 0,1-0,3%. Медно-мышьяковые сульфосоли как на верхних, так и нижних горизонтах (прослежены до горизонта 1840м) отмечаются в ассоциациях кварц-молибенитовой, кварц-молибденит-халькопиритовой, кварц-пиритовой и кварц-полиметаллической стадий, т. е. во всех рудных стадий месторождения. Вертикальная минералогическая зональность отложения мышьяковых сульфосолей с глубиной проявляется сменой энаргит-люцонит содержащих минеральных парагенезисов на теннантит содержащие.

ԲՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐ

1406 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԵՐԻՉ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ (ՀՀ)

Հարությունյան Ռ.Ա.

*ԳԱՍ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող, 24ա,
Հայաստանի Հանրապետություն
e-mail: roubenhar@web.am
Հանձնված է խմբագրություն՝ 01.10.2019*

Պատմական և երկրաշարժագիտական փաստերի վերլուծության հիման վրա, վերահաստատվում է, որ 1406 թվականի նոյեմբերի 29-ին Սյունիքում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ: Երկրաշարժի վերկենտրոնը (էպիկենտրոնը) գտնվում էր Զանգեզուրի լեռնաշղթային ջրբաժանի վրա՝ Սիսիանի լեռնազբոս, իսկ վերկենտրոնային շրջանը ներառում էր դեպի Շամբ ու Զուղա հոսող գետերի ակունքները: Երկրաշարժի հետևանքներից մեկն էլ եղել է հաջորդ տարի Զանգեզուրի լեռնաշղթայի արևմտյան և արևելյան ստորոտներում սկսված մահաբեր համաճարակը: Չեն հաստատվում 1407 թվականին տեղի ունեցած հզոր երկրաշարժի մասին ենթադրությունները:

Հանգուցային բառեր՝ պատմական երկրաշարժ, վերկենտրոն, տարեթիվ, համաճարակ:

Այս երկրաշարժը ներառված է Ambrases and Melville (1982), Զեյթունյան (1991 անտիպ), Berberian (1994), Guidoboni (1995), Բարսեղյան (1995), Անտոնյան և Հարությունյան (2005), Բաբայան (2006) կատալոգներում: Բոլորի համար սկզբնաղբյուր են հաղիսացել ԺԵ (15) դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները (ԺԵ դարի, 1955): Մական բոլոր այս աշխատանքներում, ինչպես նաև հետագա հետազոտությունների ընթացքում, առաջացել են տարակարծություններ թե երկրաշարժի թվականի՝ 1406 ու 1407, և թե վերկենտրոնի տեղադրության վերաբերյալ:

Այսպես, ըստ Ambrases and Melville (1982), Berberian (1994) կատալոգների երկրաշարժը տեղի է ունեցել 1406 թվականի նոյեմբերի 29-ին, իսկ որպես վերկենտրոն նշված է Տաթևը:

Ըստ Բարսեղյանի կատալոգի (1995) տեղի են ունեցել 2 երկրաշարժ՝ մեկը 1406 թվականին Տաթևի մոտ և մյուսը 1407 թվականին Շամբի ու Զուղայի մերձակայքում:

Ըստ Անտոնյանի և Հարությունյանի կատալոգի (2005) երկրաշարժը տեղի է ունեցել 1407 թվականի նոյեմբերի 29-ին, վերկենտրոնը գտնվում է Սիսիանից 5կմ արևելք:

Թ.Բաբայանը (2006) ենթադրում է, որ «Միսիանի շրջանում մեկ տարվա ընթացքում (1406 թվականի վերջերից 1407 թվականի վերջը) տեղի ունեցած շատ ցնցումներից առավել ուժգին են եղել երկուսը: Նշված առաջին իրադարձությունը, որը հավանաբար 1407 թվի երկրաշարժի համեմատաբար թույլ նախացնումն է եղել, ցնցել է Տաթևի վանքի կառույցները, առանց վնասելու դրանք: Երկրորդ իրադարձությունը, որը տեղի է ունեցել 1407 թվին նույն տարածքում, ավելի ուժեղ է եղել, քանի որ վնասված պատվածքներ են առաջացել, ինչպես նաև մահ է սփռվել: 1407 թվականի երկրաշարժի նկարագրված հետևանքները խոսում են այն մասին, որ նրա ինտենսիվությունը էպիկենտրոնում 8-ից ոչ պակաս է եղել, իսկ էպիկենտրոնը գտնվել է Սյունիքի, Ջուղայի (Նախիջևանի շրջան) և Շամբի (Միսիանի շրջան) միջև գտնվող վայրում»:

Գուդոբոնիի և Տրաինայի կազմած կատալոգում (Guidoboni at al. 1995), ուր հեղինակները օգտվել են Ա.Ջեյթունյանի անտիպ աշխատությունից, կատարված է հիշատակարաններում բերված տվյալների քննարկում, որի հիման վրա եկել են հետևյալ եզրակացություններին.

ա) երկրաշարժը տեղի է ունեցել 1406 թվականի նոյեմբերի 29-ին Տաթևում;

բ) 1407 թվականի Ջուղայի և Շամբի իրադարձությունների նկարագրությունները չեն վկայում երկրաշարժի մասին;

գ) չի բացառվում որ, Տաթևը ցնցած երկրաշարժը եղել է ավերիչ իր վերկենտրոնային տարածքում, քիչ բնակեցված շրջանում, որը կարելի է որոշել բոլոր վկայությունների համատեղ վերլուծության արդյունքում:

Վերը շարադրվածից ելնելով, այս վերլուծության խնդիրն է՝ ճշտել XV-րդ դարի սկզբին Սյունիքում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի տարեթիվը և վերկենտրոնի տեղադրությունը:

Սկզբնաղբյուրներում բերված վկայությունների վերլուծությունը

Նախ վերլուծենք սկզբնաղբյուրներում բերված երկրաշարժի և նրա հետևանքների երեք ականատեսների վկայությունները (ԺԵ դարի, 1955):

57-րդ հիշատակարան, գրիչ՝ Թովմա Մեծոփեցի, վայր՝ Տաթև: Հիշատակությունը գրված է ձեռագրի ստորին լուսանցքի վրա, մանր տառերով:

...Ի թվիս Հայոց ՊԾԵ. (1406), ձեռամբ Թովմայի...

Ո՛ր զարմանալի շարժմանս, զի շարժի սուրբ Առաքեալս Տաթևու, և զանգակատունս և զաւագանս, որ է նոյեմբեր ԻԹ (29):

Այս հիշատակությունը 1406 թվականի միակ վկայությունն է և ականատեսը՝ Թովմա Մեծոփեցին, ճշգրտորեն հաղորդում է, որ երկրաշարժը տեղի է ունեցել 1406 թվականի նոյեմբերի 29-ին: Բացի այդ նա զարմանքով նկարագրում է, թե ինչպես է այն արտահայտվել Տա-

թնի վանքում՝ տատանվել են եկեղեցին, զանգակատունը և ճոճվող գավազան-սյունը:

Հաջորդ հիշատակությունները վերաբերվում են 1407 թվականին:

77-րդ հիշատակարան, գրիչ Թովմա Մեծոփեցի, վայր Տաթև-Մեծոփայ վանք:

Արդ, պատմեմ յայսմ վայրի գաղէտ տարակուսանաց և կսկծի: Զի վասն բազմութեան մեղաց մերոց եղև շարժ ի վերայ երկրի, զի հաստատութիւնք երկրի դըրդեցան, և կարծր բնութիւնք վիմաց պատանեցան, և բազում դիակունք մեռեալ գտան, և ամ մի ի լման երկիրս շարժեալ: Եւ մինչ ի յայս տագնապի կայաք՝ եկն մահ տարածամ ի վերայ երկրիս (ի Զուղայ և ի Շամբն – այս գրված է լուսանցքում), և այսօր եղբայր Սմբատին պարոն Բուրթել՝ հանդերձ որդուովք իւրովք՝ հանգեալ ի Քրիստոս, և որդի Սմբատին, և այլքս՝ անթուելիք են: Եւ ով կարէ պատմել զձայն կանացեաց՝ կականալիք և աղիողորմ, զի ամենեքեան որդեկորոյս եղեն՝ որք և այրի, զի նախախնամութիւնն աստուծոյ ծաղկաքաղ առնէ զընտիրս ի մանկանց հաճելոց:

Այս հիշատակությունը պատկանում է նախորդ վկայության հեղինակ Թովմա Մեծոփեցուն, որը հաջորդ տարում նկարագրում է երկրաշարժի ընթացքը և հետևանքները.երկրում երկրաշարժ եղավ, ընդերքը դրդաց, կարծր ապառաժները պատռվեցին, զոհերի բազում դիակներ գտան, մի ամբողջ տարի ցնցումները շարունակվում էին: Այս ընթացքում, ըստ ականատեսի, սկսվում է մահ տարածամե, այսինքն համաճարակ (Մալխասեանց, 1944), որի զոհն են դառնում բազում մարդիկ, այդ թվում իշխան Բուրթելը զավակների հետ, նաև իշխան Սմբատի որդին: Հատուկ նշվում են համաճարակի տարածման շրջանները՝ Զուղան և Շամբը:

Հաջորդ ականատեսը նույնպես Տաթևից է՝ Թովմա գրիչը:

74-րդ հիշատակարան, գրիչ Թովմայ, վայր Տաթև:

...Ի թվաբերութեան Հայկազեան տոմարի Պ.-երորդի Օ.-երորդի Զ.-երորդի (1407) գրեցաւ և յանկ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածային... Եւ այսմ ամի, վասն բազմացեալ մեղաց մերոց, եղև աստուածասատ խռովութիւն, թեպէտ պատիժ, սակայն վասն սիրոյ, զի զոր սիրէ տէր՝ խրատէ: Զի եղև կրկին պատուհաս. Առաջին՝ շարժ ահագին, զի շարժեցէ զչարս ի բարի, որ և խնայեաց ի մեզ, թեպէտ ոչ ըստ արժանեաց, սակայն յախտեալ ի սիրոյն. Երկրորդն՝ մահ տարածամ, որ յոյժ տրտմեցաք, զի իշխան մեր Բիւրթել կոչեցեալ՝ ի Քրիստոս փոխեալ, մանկամ[բ]քն ծաղկեալ:

Ըստ Թովմայի հիշատակության, եղել են 2 (կրկին) պատուհաս. առաջինը՝ ուժեղ երկրաշարժ, որը իրենց վնաս չի տվել (Տաթևում), և երկրորդը՝ համաճարակ, որին զոհ են դառնել իշխան Բուրթելը և իր մանկահասակ զավակները:

Երրորդ ականատեսը վարդապետ Յոհանէսը Տաթևից չէր, այլ Սյունիքի այն շրջանից, ուր համաճարակը շատ զոհեր էր խլել (հավա-

նաբար համաճարակի կենտրոն Շամբի շրջակայքից, ավելի հավանական է վարդապետ է եղել Վաղադինի վանքում):

79-րդ հիշատակարան, գրիչ՝ Յոհաննես, վայր՝ Սիւնիք:

...Այլ և զձեզ աղաչեմ, յիշման արժանի առնեք... փոխեցեալ ի սմին ամսի Բ.(2) հօրեղբարորդիք իմ ի Քրիստոս՝ Թուխթամիշ և Բախշաիշ անուամբ, և այլ բազում, զի Բ.(2) քօյրք իմ ամսով մի առաջ՝ Է.(7) տղեցով և դստերով մեռան, զի այսմ ամի մահ տարածամ շարժեցաւ ի վերայ աշխարհի, գողայոց վերջք արար, որ բերանով չէ պատմելի, ի քսանէ, ի երեսնէ, ի յսնէ թէ մին տղ[այ] մնաց՝ ԺԵ.(15) տարոյ ի վեր, պակաս մեռաւ...

Շարունակությունում նշվում է հաջորդող դեպքի՝ Յուսուփի հաղթանակի, տարեթիվը.

...տիրեր աշխարհիս մեր Յուսուփ անուն թուրքման և այսմ ամե... /յախթահարե՞աց/ ճաղաթին, որ եկեալ ի վերայ սորա՝ թոռն Թամուրին կոչեցեալ /Աբու-Բաքր/, և Յուսուփս տիրէ թագաւորութեան... ի թվականիս Հայոց ՊԾԶ. (1407)-ի, մարերի ամսոյն ի ԻԵ.(25), մայիսի ամսոյն Թ.(9):

Այս ականատեսը վկայում է, հիշյալ տարում երկրում համաճարակ է սկսվել, որի գոհն են դարձել իր եղբայրները ու քույրերը իրենց զավակներով, որոնք մահացել են երկու ամսվա ընթացքում: Նա հատուկ ընդգծում է, որ առավել շատ երեխաներ են զոհվել՝ քսանից, երեսունից, հիսունից մեկ տղա մնաց՝ 15 տարիների ընթացքում ավելի քիչ կորուստ է լինում: Մեծ հավանականությամբ այս վկայությունը գրված է մինչև 1407 թվականի մայիսի 9: Այսինքն կարելի է կարծել, որ համաճարակը սկսվել է 1407 թվականի վաղ գարնանը:

Երկրաշարժի տարեթվի և վերկենտրոնի տեղադրության մասին

Վկայությունների վերլուծությունը հանգեցնում է միանշանակ եզրակացության՝ տեղի է ունեցել միայն մեկ ավերիչ երկրաշարժ 1406 թվականի նոյեմբերի 29-ին: 1407 թվականի բոլոր հիշատակարանները վկայություն են մեծաքանակ զոհեր խլած համաճարակի մասին, որը սկսվել է նույն թվականի գարնանը: Այդ իսկ պատճառով, 1407 թվականին տեղի ունեցած հզոր երկրաշարժի մասին կարծիքները սխալ են:

Խնդրո առարկա երկրաշարժի վերկենտրոնի տեղադրության վերաբերյալ, ինչպես նշվել է վերևում, կան տարակածություններ.

- բոլոր վերոհիշյալ կատալոգներում որպես 1406 թվականի երկրաշարժի վերկենտրոն նշվում է Տաթևը;
- 1407 թվականին կարծեցյալ երկրաշարժի վերկենտրոնը կապվում է Շամբի ու Ջուղայի հետ, իսկ ըստ Թ.Բաբայանի այդ վերկենտրոնը գտնվում է այդ բնակավայրերի միջակայքում: Այստեղ բացառություն է կազմում Անտոնյանի և Հարությունյանի կատալոգը (2005), ուր ճշգրտորեն նշվել է վերկենտրոնի այլ դիրք՝ Սիսիանից 5 կիլոմետր արևելք:

Գոյություն ունի ևս մեկ աշխատություն, ուր հետազոտությունների ընթացքում երկրաշարժի վերկենտրոնի տեղադրության վայրը նույնպես համարվել է Միսիանը (Макарян, 2018): Այս ատենախոսությունում, բնահողի հեղուկացման երևույթների ուսումնասիրությունների հիման վրա, պետք է որոշվեր երկրաշարժերի տարեթիվը և ուժգնությունը: Միսիանի մոտակայքում հեղուկացման երևույթներ նկարագրված են երեք տեղամասերում: Ըստ այդ մերկացումներից վերցված բնահողի C14 մեթոդով որոշված տարիքի, այստեղ երկրաշարժ է տեղի ունեցել 878-1013 և 1485-1650 թվերի միջակայքում, որին միակ համապատասխան պատմական երկրաշարժը 1406 թվականի դեպքն է:

Զծանրանալով հետազոտության մեթոդաբանության և դաշտային աշխատանքների արդյունքների վրա, պետք է նշել, որ հեղինակը հանգել է շատ վիճելի եզրահանգման. Միսիանի մոտ տեղի է ունեցած երկրաշարժի ուժգնությունը հասել է X-XI բալի (Макарян, 2018):

Մակայն այդ դեպքում անբացատրելի է, թե ինչպես այդ վերկենտրոնի մոտակայքի և, ըստ հեղինակի, նույն խզվածքի երկայնքով գտնվող Միսիանից Տաթև ընկած շրջանի գյուղերի, այդ թվում հատուկ հիշատակվող Շամբի, ավերման մասին չկա որևէ տեղեկություն, իսկ Տաթևի վանքը բացարձակ անվնաս է մնացել:

Պետք է կարծել, որ այս վիճելի եզրահանգումը արվել է հետազոտությունների դեռ նախնական փուլում, հիմնվելով այն թյուր կարծիքի վրա, որ 1406 թվականի M7 հզորությամբ երկրաշարժի վերկենտրոնը գտնվում էր Միսիանի մոտ (Karakhanyan et al., 2011): Այդ կարծիքը իր հերթին ձևավորվել է վերը բերված վկայությունների թյուրըմբռնության պատճառով ըստ որոնց. երկրաշարժը խիստ վնասել է Տաթևի վանքը, ավերել է Որոտնավանքը (Վաղադինի վանքը), իսկ իշխան Բուրթելին և իր որդիները գոհվել են նրա փլատակների տակ, ոմն Օգբեկի հուղարկավորության ժամանակ (Григорян, 1990):

Ի պատասխան այս պնդմանը, և ի հավելումն վերը բերված վկայությունների, մեջբերենք նաև Օգբեկի մահվան հիշատակումը (ԺԵ դարի, 1955). «Աւաղ աղետիս ի դառն կսկծիս, զի ի սոյն օր հանգեաւ ի Քրիստոս Օգբեկն ի ճանապարհին, և թաղեցաւ ի սուրբ ուխտս Վաղադնու, և յեռանդեան օր երկոքին որդիք պարոն Բուրթելին, և տեսաք սուգ, զոր ոչ է իմ տեսեալ...»: Այսինքն պարոն Բուրթելի երկու որդիները մահացել են Օգբեկի մահվանից երկու օր առաջ (յեռանդեան օրն նշանակում է «երեկ չէ՝ առաջին օրը», ըստ Մալխասյանց, 1944): Իսկ պարոն Բուրթելի խաչքարի գրությունը (Դիվան, 1955). «Կանգնեցաւ ՄԲ խաչս ի բարեխաւսութի պարոն Բուրթելին եւ որդոց նորին ԹՎ.: ՊԾՁ» (856)=1407, վկայում է, ինչպես և նախորդ մեջբերումը, որ այդ դեպքերը տեղի են ունեցել 1407 թվականին, իսկ Որոտնավանքի ավերման մասին խոսք չկա:

Առավել ընդունելի է թվում Է.Գուիդոբոնիի կարծիքը (Guidoboni, 1995), ըստ որի, չի բացառվում որ, Տաթևը ցնցած երկրաշարժը եղել է ավերիչ իր վերկենտրոնային տարածքում, որը գտնվել է քիչ բնակեց-

ված շրջանում և նրա տեղադրությունը կարելի է որոշել բոլոր վկայությունների համատեղ վերլուծության արդյունքում»:

Եվ այսպես, ի՞նչ հստակ վկայություններ և փաստեր ունենք երկրաշարժի ուժը և վերկենտրոնի տեղադրությունը որոշելու համար:

Ականատեսի վկայությունները 1406 թվականի եղելությունների մասին.

- երկրաշարժի հետևանքով Տաթևի վանքի շինությունները չեն վնասվել՝ եկեղեցին, զանգակատունը և ճոճվող գավազանը միայն տատանվել են;
- երկրաշարժի հետևանքով գետնի վրա առաջացել են պատրվածքներ;
- երկրաշարժը ուղեկցվել է դրդոցով;
- զոհերի բազում դիակներ են գտնվել;
- Ականատեսների 1407 թվականի վկայությունները.
- ցնցումները շարունակվել են մեկ տարի;
- երկրաշարժին հետևել է «մահ տարածամ», այսինքն համաճարակ;
- համաճարակը տարածվել է միաժամանակ Ջանգեզուրի լեռնաշղթայի արևելյան և արևմտյան ստորոտներում՝ Շամբում ու Ջուղայում;
- համաճարակին զոհ են դառել սոցիալական բոլոր, ներառյալ իշխանական, խավերի ներկայացուցիչները: Հատուկ նշվում է բազում երեխաների վախճանը:

Հետևություն անելուց առաջ նպատակահարմար է ներկայացնել XX դարում տեղի ունեցած երկու Ջանգեզուրյան ավերիչ երկրաշարժերի նկարագրությունները:

Առավել մանրամասն ուսումնասիրվել է 1968 թվականի հունիսի 9-ի երկրաշարժը, որի վերկենտրոնի կոորդինատներն են $\varphi = 39.20$, $\lambda = 46.20$, ներկենտրոնի (հիպոկենտոն) խորությունը՝ 11 կմ, իսկ հզորությունը՝ M4.9 (Новый, 1977): Այս երկրաշարժի հետևանքով ավերվել են Քաջարանին մոտակա Գեղի կիրճի գյուղերը, ինչպես նաև Ջանգեզուրի լեռնաշղթայի արևմտյան լանջին գտնվող Նուրգյուտ և Խուրսթ գյուղերը: Ցնցումների առավելագույն արտահայտությունը եղել է Գեղի կիրճում, ուր նրանց ուժգնությունը գնահատվել է VII-VIII բալ, իսկ Տաթևում ու Շամբում ցնցումների ուժգնությունը հասել է համապատասխանաբար VI և V բալի (Результаты, 1973):

Ավելի ուժեղ երկրաշարժ է տեղի ունեցել 1931 թվականի ապրիլի 27-ին, որի վերկենտրոնի կոորդինատներն են $\varphi = 39.20$, $\lambda = 46.00$, հզորությունը՝ M6.3 (Новый, 1977): Այս երկրաշարժը ՀՀ տարածքի առավել խոր ներկենտրոն ունեցող երկրաշարժերից է և նրա խորությունը գնահատված է միջինում 27 կմ: Հետհարվածները շարունակվել են մոտ մեկ տարի: Ցնցումները առավել ուժգին են եղել Սիսիանի շրջանի արևմուտքում, ուր նրանց ուժգնությունը գնահատվել է VIII-IX բալ: Որոտնավանքում ցնցումների ուժգնությունը հասել է IX բալի, իսկ Տաթևի

վանքի տարածքում ավելի քան VIII բալի: Երկրաշարժի հետևանքով մեծ ավերվածություններ են եղել Ջանգեզուրի լեռնաշղթայի երկու կողմերում էլ: Շատ են տուժել ինչպես արևելյան լանջերին գտնվող գյուղերը՝ Ախլաթյան, Բոնակոթ, Դաստակերտ և այլ, այնպես էլ արևմտյան լանջերի գյուղերը՝ Նուրգյուտ, Խուրսթ, Նասրվազ և այլ: Նրանց տեղում մնացել էին բառացիորեն ավերակների կույտեր, որոնցում պատերի մնացորդների տակից դուրս էին ցցված գերանները (Новый, 1977):

1931 թվականի երկրաշարժի վերկենտրոնի,...ամբողջ տարածքը հիմնականում բարձր լեռնային է, խիտ կտրտված խորը ձորերով և ձորակներով: Շատ դեպքերում գյուղերը ծվարել են լեռների լանջերի առավել անմատչելի վայրերում, ուր կարելի է հասնել դժվար անցանելի լեռնային կածաններով: Տները կառուցվել են ավանդական ձևով՝ հում աղյուսից կամ քարից կավե լցանյութով: Կիրը բացակայում է: Փայտը (հիմնականում բարդի) օգտագործվում է շատ խնայողաբար, քիչ մատչելիության պատճառով: Տները կառուցվել են լանջերին այնպես, որ ներքևիների կտուրները ծառայում են վերևիների համար բակ կամ փողոց: Կտուրները ծանրացված են հողի հաստ (մինչև 50-80սմ) շերտով: Նման կառույցները դժվար թե կարողանան դիմակայել նույնիսկ թույլ ցնցումներին... Հետևաբար, մեծ վնասների պատճառը պետք է համարել ոչ թե երկրաշարժի ուժը, այլ շենքերի կառուցվածքը: Ամենահզոր հարվածը եղել է երեկոյան՝ տեղական ժամանակով ժամը 21-ին, երբ բնակչությունը արդեն գտնվում էր տներում, ինչի հետևանքով կան մեծ թվով զոհեր: Ջանգվածաբար սպանվել են գյուղացիների ապրուստի միջոց հանդիսացող խոշոր և մանր եղջերավոր կենդանիները: Լրիվ կամ մասամբ ավերվել է 239 գյուղ (Райко, 1932):

Վերկենտրոնի շրջանում ավերվել էին նաև ամրաշեն եկեղեցիներ (Новый, 1977).

- զգալի ավերվածություններ էին եղել Որոտնավանքի համալիրում;
- լրջորեն վնասվել էր և Տաթևի վանքի համալիրը;
- որոշ գյուղերում եղած եկեղեցիները, որոնք օգտագործում էին որպես պահեստներ, նույնպես ավերվել էին:

1931 և 1968 թվականների երկրաշարժերի համեմատական տվյալները.

- երկրաշարժերի վերկենտրոնները գտնվում էին Ջանգեզուրի լեռնաշղթայի ջրբաժանի շրջանում;
- ավերվել են Ջանգեզուրի լեռնաշղթայի ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան լանջերին գտնվող գյուղերը;
- Տաթևի վանքի տարածքում ցնցումների ուժգնությունը 1931 թվականին եղել է, ավելի քան VIII բալ, ինչի հետևանքով վանքի շինությունները զգալի վնասվել են, իսկ 1968 թվականին ցնցումների ուժը եղել է VI բալ;

- Շամբում ցնցումների ուժգնությունը 1931 թվականին հասել է IX բալի, իսկ 1968 թվականին նրանց ուժգնությունը գնահատվել է V բալ:
- 1931 թ. երկրաշարժի ցնցումները շարունակվել են մեկ տարի:

Եզրակացություն

Վերը նշված վկայությունների և տեղեկությունների հիման վրա կարելի գալ հետևյալ եզրակացությանը. 1406 թվականի նոյեմբերի 29-ին Սյունիքում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ, որը իր հետևանքներով համեմատելի էր 1931 թվականի երկրաշարժի հետ: Երկրաշարժի պատճառով գետնի վրա առաջացել են պատռածքներ, հիմնահատակ ավերվել են գյուղեր, իրենց փլատակների տակ թաղելով բնակիչներին: Ականատեսները չեն հիշատակում եկեղեցիների ավերման մասին, սակայն շատ հավանական է, որ, այս երկրաշարժը ավերել է, այդ ժամանակներում իր նշանակությամբ Սյունիքի, Տաթևից հետո, երկրորդ սրբատեղին (Օրբելյան, 1968)՝ Թանահատի վանքը (ներկայիս Արևիս գյուղից 3կմ հյուսիս), քանի որ հետագայում այն չի հիշատակվում գործողների շարքում (Արևիսի պատմության հուշարձանների ցանկ - <https://hy.wikipedia.org>):


Պետք է կարծել, որ 1406 թվականի երկրաշարժի ժամանակ չի ավերվել, 1931 թվականին ավերված Վաղաղիկի վանքը (Որոտնավանքը), քանի որ այնտեղ էին հուղարկավորել իշխան Բուրթելին ու համաճարակի այլ զոհերին, բայց նրա վնասվելու մասին տեղեկություն չկա:

Հետցնցումները շարունակվել են մեկ տարի:

Երկրաշարժի վերկենտրոնի շրջանում են սկիզբ առնում բոլոր այն գետերը որոնք հոսում են դեպի Շամբ ու Ջուղա: Ի դեպ, դեպի Շամբ հոսող գետերի ակունքների մոտ է գտնվում ոչ միայն Թանահատի վանքի ավերակները, այլ և 1931 թվականի երկրաշարժի վերկենտրոնը: Սակայն, քանի որ 1406 թվականի երկրաշարժի ցնցումները Տաթևի վանքի տարածքում ունեցել են IV-V բալի ուժգնություն, իսկ 1931 թվականի երկրաշարժի ցնցումների ուժգնությանը այնտեղ հասել է VIII-IX բալի, ապա կարելի է կարծել, որ նրա վերկենտրոնը գտնվել է Տաթևից ավելի հեռու դեպի հյուսիս: Շատ հավանական է, որ այն գտնվել է Միսիանի լեռանցքի մոտակայքում: Այստեղ, Բիչենակ (հնում Բջնաղ) գյուղի մոտ, նկարագրված է, հզոր երկրաշարժերի վերկենտրոններին բնորոշ ցնցումնաձին կառույց, որը առաջացել է, իրարից երկար ժամանակով միջնորդված, երկու հզոր երկրաշարժի հետևանքով (Жидков и др., 1987): Սրանցից երկրորդ երկրաշարժը տեղի է ունեցել, առնվազն 500 տարի առաջ, այսինքն նկարագրված ցնցումնաձին կառույցը կարող էր առաջանալ 1406 թվականի նոյեմբերի 29-ին տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով: Ըստ այդմ 1406 թվականի երկրաշարժին կարելի է վերագրել Ժիդկովի կողմից որոշված (Жидков и др., 1987) վերկենտրոնի $\varphi = 39.5^\circ$, $\lambda = 45.8^\circ$ կոորդինատներն և, ըստ ցնցումնաձին

կառույցի չափերի գնահատված, հզորությունը՝ M6.9: Վերկենտրոնի շրջանում, որը ներառել է իր մեջ դեպի Շամբ ու Զուղա հոսող գետերի ակունքները, ցնցումների ուժգնությունը հասել է IX բալի, ինչի հետևանքով ավերվել է Թանահատի վանքը: Ըստ վերկենտրոնի տեղադրման դիրքի, կասկածից վեր է, որ առավելագնացված շրջանը (pleistoseist area) ներգրավել է նաև որոշ տարածք հարևան Վայոց Ձորից:

Նշենք, որ նախկինում այս վերկենտրոնը իմ կողմից համարվել է Հանքավան-Զանգեզուրի ակտիվ խզվածքի արտահայտություն և կապվել է 735 թվականի երկրաշարժի հետ (Հարությունյան, 2001), որի մասին պատմական վկայությունները վերաբերվում են ամբողջ Վայոց Ձորի տարածքին, ուր գոհվել է տաս հազար մարդ, սակայն չկա որևէ ավերված շինության կամ գետնի պատվածքների տեղորոշում: Իսկ 1406 թվականի Զանգեզուրյան այս երկրաշարժի ցնցումների ուժգնության մասին եղած տվյալները (Տաթև - IV-V /ըստ ականատեսի, որը ունեցել ոչ թե վախի զգացում, այլ զարմանքի (Шкала, 2017); Վաղաղին - V /Որոտնավանքը չի վնասվել, Շամբում ավերումներ չեն եղել; Զանգեզուրի լեռնաշղթայի ջրբաժանի շրջանի գյուղերը - VII-IX /գոհեր; Արևիս - IX /Թանահատ վանքի հիմնահատակ ավերումը; Սիսիանի լեռնանցք - IX /ցնցումնաձին կառույց), հնարավորություն են տալիս կառուցել երկրաշարժի հավասարացնցների (իզոսեյստերի) քարտեզ (նկ.1), ինչը ավելի համոզիչ է դարձնում այս վարկածը: Այդ իսկ պատճառով, առավել հավանական է, որ 735 թվականի երկրաշարժի վերկենտրոնը գտնվել է ավելի հյուսիս՝ Վայոց Ձորի տարածքում:



Նկ.1. 1406 թվականի նոյեմբերի 29-ի Զանգեզուրյան ավերիչ երկրաշարժի հավասարացնցների (իզոսեյստերի) հնարավոր քարտեզը (աստղանիշով նշված են երկրաշարժերի վերկենտրոնները):

Հաշվի առնելով, որ 1406 թվականի երկրաշարժի VIII-IX բալ ցնցումների ուժգնությամբ տարածքը զգալի փոքր է 1931-ի համապատասխան՝ Նուրգյուտ-Արնիսից հյուսիս-Սիսիան-Տաթև պարագծով, տարածքից (Бабаян и др., 1987), կարելի է կարծել, որ 1406-ի երկրաշարժի ներկենտրոնի խորությունը ավելի փոքր է եղել:

Վերը շարադրվածի հիման վրա կարելի վերստեղծել 1406 թվականի նոյեմբերի 29-ի Ջանգեզուրյան երկրաշարժի հետևյալ հետահալաց պատկերը.

1406 թվականի նոյեմբերի 29-ին Ջանգեզուրի լեռնաշղթայի ջրբաժանի շրջանում տեղի է ունեցել ավերիչ երկրաշարժ, որի վերկենտրոնը գտնվում է Սիսիանի լեռնանցքում: Վերկենտրոնի այն շրջանը, որտեղ ցնցումների ուժգնությունը կազմում էր VII-IX բալ, իր մեջ է ներառում բոլոր այն գետերի ակունքները, որոնք հոսում են դեպի Սիսիան, Շամբ, Նախիջևան ու Ջուղա:

Քանի որ նոյեմբերի 29-ին աղետի ենթարկված տեղանքը արդեն ձևաձածկ էր, շատ հավանական է, որ մարդկանց դիակների և կենդանիների լեշերի մի մասը մնացել են իրենց գոհվելու տեղերում: Գարնանը, երբ սկսվել է ձնհալը, քայքայվող դիերը ապականել ու վարակել են լեռնային գետերի ակունքները և մահաբեր հիվանդության վարակը գետերով տարածվել է մինչև ստորոտներում գտնվող Շամբ ու Ջուղա: Գարնան սկզբից Ջանգեզուրի լեռնաշղթայի արևմտյան և արևելյան ստորոտներում բազմաթիվ մարդկանց, առավելապես երեխաների, կյանք է խլում մոլեգնող համաճարակը:

Հավանաբար հարց կարող է առաջանալ, թե ինչո՞ւ դեպի Շամբ ու Ջուղա հոսող գետերի ակունքներում առաջացել էր համաճարակածին իրավիճակ, իսկ Սիսիանի լեռնանցքում՝ Նախիջևան գետի ակունքում, ոչ: Դա կարելի է բացատրել նրանով, որ Սիսիանի լեռնանցքով է անցել Սյունիքը Նախիջևանին կապող հնադարյան բանուկ ճանապարհը և ավերված բնակավայրերը չեն եղել այն աստիճանի լքված, ինչպես առավելացնցված շրջանի մյուս գյուղերը, որոնք ,ծվարել էին լեռների լանջերի առավել անմատչելի վայրերում, ուր կարելի էր հասնել դժվար անցանելի լեռնային կաճաններով:

Հեղինակը շնորհակալ է Ա.Վ.Ավագյանին հոդվածի արդյունավետ քննարկումների համար:

Գրականություն

- Անտոնյան Ա.Շ., Հարությունյան Հ.Հ.** 2005. Պատմական ավերիչ երկրաշարժերը Հայաստանի Հանրապետության տարածքում: Երևան, Անտարես, 62 էջ:
- Բաբայան Թ.** 2006. Հայաստանի Հանրապետության, Արցախի և հարակից տարածքներում հնագույն ժամանակներից մինչև 2003 թվականը տեղի ունեցած ուժեղ երկրաշարժերի ատլաս: Երևան, Տիգրան Մեծ, 140 էջ:
- Բարսեղյան Լ.Ա.** 1995. Պատմական վկայությունները Հայկական լեռնաշխարհի երկրաշարժերի մասին: Երևան, Հայաստանի ԳԱԱ հրատ., 66 էջ:
- Դիվան հայ վիմագրության, պր. 2, 1960, Երևան, Ակադեմիա, 241 էջ:

- ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1955, Երևան, Ակադեմիա, 820 էջ:
- Հարությունյան Ռ.Ա.** 2001. Հայկական լեռնաշխարհի ակտիվ հրաբխականության մասին, ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, հատ. LIV, № 1, էջ 3-11:
- Մալխասյանց Ս.** 1944. Հայերեն բացատրական բառարան, հ.3, Հայպետհրատ, 615 էջ:
- Бабаян Т.О., Симонян Г.П.** 1987. Тектонические особенности зон возникновения сильных землетрясений Зангезура. Ереван, Изв. АН АрмССР, Науки о Земле, XL, N2, с.60-67.
- Григорян Г. М.** 1990. Очерки истории Сюника. IX—XV вв. Ереван, АН АрмССР, 390с.
- Жидков М.П., Макаренко А.Г., Ранцман Е.Я.** 1987. Биченагская сейсмогенная структура в Зангезурском хребте (Малый Кавказ). Геоморфология, N3, с.44-48.
- Макарян Х.В.** 2018. Анализ явления разжижения грунта: новые данные о сейсмической активности Сардарапатской структуры, Памбак-Севан-Сюникского активного разлома и бассейна озера Севан, кандидатская диссертация, Ереван, НАНА ИГН, 101с.
- Новый каталог сильных землетрясений на территории СССР. 1977. Москва, "Наука", 536с.
- Райко Н.В.** 1932. Зангезурская сейсмическая экспедиция, Ленинград, Вестник АН СССР, с.177-184.
- Результаты комплексного изучения Зангезурского землетрясения. 1973. Ереван, АН АрмССР, 262с.
- Шкала сейсмической интенсивности (ШСИ-17). 2017. Москва, Стандартинформ, 31с.
- Ambraseys N.N. and Melville C.P.** 1982. A history of Persian earthquakes. London, Cambridge University Press, 219p.
- Berberian M.** 1994. Natural Hazards and the First Earthquake Catalogue of Iran, vol. I, Hist. Haz. in Iran Prior to 1900, IIEES, July, 631p.
- Guidoboni E. and Traina G.A.** 1995. A New Catalog of Earthquakes in the Historical Armenia Area from Antiquity to the 12th Century, Annali di Geofysica, vol. XXXVIII, N1, p.85-147.
As a result of this study, seismic activity of the "inferred" faults in the volcanic Javakheti Ridge was confirmed and the sense of motions along the faults was determined based on the focal mechanism solutions.

ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱ

**ԷԼԵԿՏՐԱԶՈՆԴԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՄԻՋ- և ԸՆԴԱՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՐ
ՀՈՐԻԶՈՆՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԵՎ ՀԵՏԱՄՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ**

Դեմիրճյան Ս. Մ.

*Երևանի պետական համալսարան
ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
E-mail: sam.demirtshyan@gmail.com
Հանձնված է խմբագրություն 25.09.2019*

Աշխատանքում ջրաերկրաբանական խնդիրների լուծման նպատակով առաջարկված և հիմնավորված է էլեկտրահետախուզական մեթոդների երկրաֆիզիկական համալիր:

Ցույց են տրված հանրահայտ ուղղաձիգ էլեկտրազոնդավորման (ՈԻԷԶ) մեթոդի սահմանափակումները փոքր հզորությամբ շերտերի և լոկալ անհամասեռությունների առկայության պարագայում: Այսպիսի դեպքերում առաջարկվում է խնդիրները լուծել զոնդավորմամբ դաշտի տարանջատման (ԶԴՏՄ) և համատարած էլեկտրազոնդավորման (ՀԷԶ) մեթոդներով:

Ջրամերժ ռելիեֆի քարտեզագրման նպատակով առաջարկված է կիրառվող մեթոդների համալիրում ընդգրկել էլեկտրազոնդավորման դաշտի վերականգնման (ԷԴՎ) մեթոդը:

Հանգուցային բառեր. էլեկտրահետախուզություն, հնահուներ, ջրատար հորիզոն, հրաբխային տարածքներ, արդյունավետ համալիր:

Ներկայացված հոդվածում հիմնավորված են հրաբխային տարածքներում էլեկտրահետախուզական մեթոդների կիրառման արդյունավետության բարձրացման մոտեցումներ, առաջին հերթին, հնահունների և հատկապես փոքր հզորությամբ ջրատար հորիզոնների հայտնաբերման նպատակով: Ինչպես ցույց է տալիս փորձը, էլեկտրահետախուզական ՈԻԷԶ մեթոդը նման հարցերի լուծման համար ունի որոշակի սահմանափակումներ, որը պայմանավորված է հատկապես էլեկտրահետախուզությունում հայտնի էկվիվալենտության (համարժեքության) սկզբունքի առկայությամբ (Хмелевской, 1970):

Ուսումնասիրությունների տեսակետից կարևոր է դառնում էլեկտրահետախուզական համալիրի լրացման առաջարկությունը և դրա գործնական կիրառումը, հատկապես հրաբխային կառույցներում ջրաերկրաբանական խնդիրների լուծման նպատակով:

ՀՀ հրաբխային տարածքներում հետազոտությունների արդյունավետության և ստացված արդյունքների հավաստիության բարձրացումը պահանջում են կիրառվող երկրաֆիզիկական համալիրի ճիշտ

ընտրություն, նկատի ունենալով մասնավորապես հրաբխային շրջանների բարդ ջրաերկրաբանական պայմանները՝ հզոր լավային հաստվածքներ և առանձին դեպքերում փոքր ջրատար հորիզոններ:

Հրաբխային կառույցների երկրաբանա-ջրաերկրաբանական ընդհանրացված կտրվածքը ներկայացվում է հիմնականում ապարների երեք համալիրներով. ստորին – լավատակ, ներկայացված հիմնականում պալեոգեն-նեոգեն հասակի նստվածքային և հրաբխա-նստվածքային ապարներով, որոնք հանդիսանում են ռեզիոնալ ջրամերժ ապարներ: Միջին – ներկայացված են հրաբխային ապարներով, հիմնականում չորրորդական հասակի, որոնք հանդիսանում են հիմնական ջրատար շերտերը: Վերին – ժամանակակից լճա-գետային, էյուվիալ-դելյուվիալ առաջացումներ են՝ ավազներ, մանրախճեր, ավազակավեր և այլն:


Ջրաերկրաֆիզիկական ուսումնասիրությունները ՀՀ տարածքում հիմնականում իրականացվել են ռեզիոնալ ջրամերժ ռելիեֆի պարզաբանման և ջրատար հորիզոնների հայտնաբերման նպատակով: Մեթոդների ընտրության ժամանակ հաշվի են առնվել հետևյալ մոտեցումները. 1) համեմատաբար արդյունավետ ջրաերկրաֆիզիկական մեթոդների համալիր և 2) տվյալների քանակական համակարգային վերլուծություն (Минасян и Варданян, 2003):

Հրաբխային կառույցների ֆիզիկա-ջրաերկրաբանական մոդելների ապարների պետրոֆիզիկական հատկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ջրաերկրաբանական խնդիրների լուծման համար գերիշխող ֆիզիկական ցուցանիշներ են հանդիսանում էլեկտրական հատկությունները, որոնք պայմանավորված են տարածքի ապարների տեսակով, կառուցվածքա-ձևաբանական և հիդրոդինամիկ պայմաններով: Հայտնի է, որ լավային ապարների դիֆֆերենցիալ քստ տեսակարար էլեկտրական դիմադրության (ρ), պայմանավորված դրանց ջրատարության և ստորերկրյա ջրերի հանքայնացման աստիճանով, լավային ու լավատակ առաջացումների էլեկտրական դիմադրություններով, հնարավորություն է տալիս ջրաերկրաբանական խնդիրների լուծման ժամանակ լայնորեն կիրառել էլեկտրահետախուզական մեթոդների տարբեր մոդիֆիկացիաներ: Ջրաերկրաբանական ուսումնասիրությունների խնդիրներն են՝ 1) տարածքի ռեզիոնալ ջրամերժ շերտի քարտեզագրում, 2) միջ- և ընդլավային ջրատար հորիզոնների հայտնաբերում և հետամտում: Այդ խնդիրների լուծման ընթացքում ՈւԷԶ մեթոդի կիրառումը, առանձին դեպքերում, հանդիպում է որոշակի դժվարությունների պայմանավորված տարածքի բարդ ռելիեֆի, բնակավայրերի և այլ անտրոպոգեն կառույցների առկայությամբ: Բացի այդ գոնդավորումը դաշտի վերականգնման մեթոդով ավելի արագ կիրառելի է և քիչ աշխատատար: Նման պայմաններում առաջարկվում է կիրառել էլեկտրահետախուզական մեթոդների այնպիսի մոդիֆիկացիաներ, որոնք հնարավորություն են տալիս լուծել դրված ջրաերկրաբանական խնդիրները, մասնավորապես գոնդավորումը

դաշտի վերականգնման մեթոդով (ԴՎՄ): (Ha Ngoc, 1997; Keller and Frischknecht, 1996; ИВАНОВ, 2011):

Իսլանդիայում, Ինդոնեզիայում, Ֆրանսիայում և Եգիպտոսում ջրաերկրաբանական խնդիրների լուծման նպատակով հրաբխային տարածքներում էլեկտրահետախուզական մեթոդներով իրականացված ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ հիմնականում կիրառվում են ՈՒԷԶ և ԴՎՄ մեթոդները (Demissie, Árnason, Metwaly, Georgsson, Tsend-Ayush, Pangaribuan and etc.) (Lénat and etc., 2000):

Հայտնի է նաև, որ կտրվածքում մերձակերեսային անհամասեռությունների առկայության դեպքում ՈՒԷԶ մեթոդի տվյալների մեկնաբանումը դառնում է ոչ միաբժեք: Նման օրինակ բերված է նկար 1-ում:




Նկ.1. ՀՀ հրաբխային տարածքում իրականացված անհամասեռ ՈՒԷԶ կորերի օրինակներ:

Նկ.1-ում ներկայացված են ՀՀ հրաբխային տարածքում իրականացված ՈՒԷԶ կորերի վրա լոկալ անհամասեռությունների առկայության հետևանքով առաջացած աղավաղումներ, որոնք կարող են հանգեցնել մեկնաբանման սխալների:

Ընդունված է անհամասեռությունները բաժանել երկու խմբի՝ մերձակերեսային և խորքային: Սովորաբար խորքային անհամասեռու-

թյունները փնտրվող օբյեկտներն են, իսկ մերձակերեսայինները աղավաղում են չափումների արդյունքները, ուստի դրանց ազդեցությունները պետք է գնահատվեն նախքան տվյալների քանակական մեկնաբանությունների իրականացումը:

Հանդիպում են մերձակերեսային անհամասեռությունների ազդեցությունների (ՄՄԱ) երկու տեսակ – աղավաղումներ այն անհամասեռությունների կողմից, որոնք տեղադրված են ընդունող էլեկտրոդների մերձակայքում (P-էֆֆեկտ) և աղավաղումներ, որոնք հետևանք են սնող էլեկտրոդների տեղադրման (C-էֆֆեկտ) (Хмелевской и др., 2005):



Նկ.2. C-էֆֆեկտ և P-էֆֆեկտ:


C-էֆֆեկտը արտահայտվում է Ուիլսոն կորի աղավաղմամբ առանձին բացվածքների դեպքում (երբ սնող էլեկտրոդը հայտնվում է անհամասեռության վրա): P-էֆֆեկտն արտահայտվում է որպես կորի ուղղահայաց տեղաշարժ դիմադրության առանցքով առանց կորի ձևի փոփոխությունների: Այս դեպքում փոխվում է կորի ձևը և նույնիսկ կարող է շերտերի քանակի «ոչ իրական» ավելացմամբ արտահայտվել (նկ.2):

Քանի որ անհամասեռությունները կորի վրա ունենում են աղավաղող ազդեցություն, այդ իսկ պատճառով կարիք է առաջանում հասցնել նվազագույնի սնող և ընդունող էլեկտրոդների համընկնման հնարավորությունները դրանց վրա: Այդ անհամասեռությունների տեղադիրքերի որոշումը պահանջում է նպատակային ուսումնասիրություն, ուստի ՀԷՁ զոնդավորումներն իրականացվում են բացվածքի մեծացման թվաքանակի քայլով: Այսպիսի չափումների ժամանակ ՄՄԱ-ն արտահայտվում է որպես պարբերական «աղավաղիչ»: Պարբերական

աղավաղումները պատահականների համեմատությամբ ավելի հեշտ է բացահայտել և հեռացնել:

ՀԷՁ մեթոդը հնարավորություն է տալիս ուսումնասիրությունների ընթացքում գնահատել և հետագա մեկնաբանություններում հաշվի առնել լոկալ անհամասեռությունները, ուստի վերջինս առաջարկվում է կիրառել այսպիսի աղավաղումների առկայության դեպքում:

Զոնդավորումը դաշտերի տարանջատման մեթոդով (ԶԴՏՄ) ապահովում է միջլավային փոքր ջրատար հորիզոնների տարանջատում (Demirtshyan and Minasyan, 2018), հետևաբար այն առաջարկվում է կիրառել հատկապես հրաբխային կառույցներում, կտրվածքի ավելի մանրամասն դիֆֆերենցման նպատակով: Մասնավորապես ՀՀ Դոմաշեն գյուղի տարածքում իրականացված ՈԻԷԶ և ԶԴՏՄ մեթոդների ու հորատանցքի տվյալների վերլուծության օրինակ բերված է նկ.3-ում: Նկատելի է, որ 30մ հզորությամբ ջրատար հորիզոնը, տեղադրված 20 մ խորության վրա ՈԻԷԶ կորի մեկնաբանման արդյունքներում չի արտահայտվել, որը արտահայտվել է ԶԴՏՄ կորի մեկնաբանման արդյունքներով (նկ.3): Հետևաբար, միջլավային համեմատաբար փոքր ջրատար հորիզոնների հայտնաբերման համար առաջարկվում է կիրառել ԶԴՏՄ մեթոդը:



Նկ.3. ՈԻԷԶ և ԶԴՏՄ կորերի, և հորատանցքի համատեղ մեկնաբանություն. 1 – ավազազլաքարային առաջացումներ, 2 – ճեղքավոր, ջրատար, լավային ապարներ, 3 – համեմատաբար ամուր լավային ապարներ:

Այսպիսով, աշխատանքում իրականացված վերլուծություններից ելնելով ՀՀ տարածքում հնառելիեֆի քարտեզագրման և միջլավային ջրատար հորիզոնների հայտնաբերման նպատակով արդյունավետ երկրաֆիզիկական մեթոդների համալիր է հանդիսանում՝ ուղղաձիգ էլեկտրազոնդավորման (ՈԻԷԶ), դաշտի վերականգնման զոնդավորման (ԴՎՄ), համատարած էլեկտրազոնդավորման (ՀԷԶ) և դաշտի տարանջատման զոնդավորման (ԶԴՏՄ) մեթոդների համալիրը:

Եզրակացություն

Հրաբխային տարածքներում իրականացված աշխատանքների փորձը բերում է հետևյալ եզրակացությունների.

- Հաշվի առնելով, առանձին տարածքների բարդ ռելիեֆային պայմանները աշխատանքի իրականացման նպատակով առաջարկվում է հրաբխային տարածքներում ռեգիոնալ ջրամերժ շերտի ռելիեֆի քարտեզագրման նպատակով կիրառել համատեղ ՈԻԷԶ և ԴՎՄ մեթոդները:
- ՈԻԷԶ մեթոդով ուսումնասիրությունների ժամանակ լոկալ անհամասեռությունների առկայության դեպքում, դրանց ազդեցությունների գնահատման նպատակով առաջարկվում է կիրառել ՀԷԶ մեթոդը:
- Միջլավային փոքր հզորություն ունեցող ջրատար հորիզոնների հայտնաբերման նպատակով առաջարկվում է կիրառել էլեկտրահետախուզական ԶԴՏՄ մեթոդը:
- Հրաբխային տարածքներում ջրաերկրաբանական խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է կիրառել՝ ՈԻԷԶ, ԴՎՄ, ԶԴՏՄ և ՀԷԶ մեթոդների համալիրը:

Գրականություն

- Иванов П.В.** 2011. Совместная интерпретация данных методов вертикального электрического зондирования и зондирования становлением поля в ближней зоне. Санкт-петербург, записки горного института, с.183-187.
- Минасян Р.С. и Варданян В.П.** 2003. Палеорельеф и распределение подземного стока центрального вулканического нагорья армении. Ереван, Асогик, 151с.
- Хмелевской В.К.** 1970. Основной курс электроразведки. Часть 1. Электроразведка постоянным током. Москва, МГУ, 245с.
- Хмелевской В.К., Модин И.Н. и Яковлев А.Г.** 2005. Электроразведка: пособие по электроразведочной практике для студентов геофизических специальностей. Москва, 311с.
- Demirtshyan S.M. and Minasyan R.S.** 2018. Features of The Distribution of Electric Fields of Multipoint Grounding and Their Application in Hydrogeology. Armenian journal of physics, Volume 11, Issue 3, p.135-140.
- Ha Ngoc Hung.** 1997. The use of schlumberger sounding in geothermal exploration with an example from krisuvik area, sw-iceland. geothermal training programme Orkustofnun, Grensasvegur 9, IS-108 Reykjavik, Iceland, p.137-164.
- Keller G.V. and Frischknecht F.C.** 1966. Electrical Methods in Geophysical Prospecting. Pergamon Press, Oxford, p.1-517.
- Lénat J.-F., Fitterman D., Jackson D. B., Labazuy P.** 2000. Geoelectrical structure of the central zone of Piton de la Fournaise volcano (Réunion). Bull Volcanol, p.75-89.

**СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ МЕТОДОВ
ЭЛЕКТРОЗОНДИРОВАНИЯ С ЦЕЛЬЮ ОБНАРУЖЕНИЯ И
ОТСЛЕЖИВАНИЯ МЕЖ- И ПОДПЛАВОВЫХ ВОДАНОСНЫХ
ГОРИЗОНТОВ**

Демирчян С.М.

Резюме

В работе для решения гидрогеологических задач предложен и обоснован геофизический комплекс электроразведочных методов.

Показаны ограничения общеизвестного метода вертикального электрического зондирования (ВЭЗ) при наличии маломощных горизонтов и локальных неоднородностей. В таких случаях предлагается решать задачи с помощью зондирования методом вычитания поля (ЗМВП) и методом сплошного электроразведочного зондирования.

С целью картирования водоупорного рельефа предлагается включать в применимый комплекс метод электроразведочного становления поля (ЗСП).

**COMPARATIVE ANALYSIS OF THE ELECTRIC SOUNDING
METHODS FOR THE PURPOSE OF DETECTION AND
INVESTIGATION OF INTER- AND UNDER-LAYERING AQUIFERS**

S. M. Demirtshyan

Abstract

In this work, the efficiency of electric methods in volcanic areas is suggested and justified for the purpose of solving hydrogeological problems.

The limitations of well-known vertical electrical sounding VES method in the presence of thick horizons and local inhomogeneties have been shown. In such cases, it is proposed to solve problems using the sounding by the method of subtraction of fields (SMSF) and by the method of continuous electric sounding (CES).

In order to map waterproof relief, the inclusion of the method of transient electric sounding (TES) in the applicable complex is proposed.

ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԽՐՈՆԻԿԱ



Travelling Conference:

„Sustainable Water Resource Management in Regions with Heavily Overexploited Aquifers under Consideration of Regional Impacts of Climate Change“ (“TC WaterUse”)

July 2-5, 2019

Institute of Geological Sciences of NAS, Yerevan, Armenia



«Ջրային ռեսուրսների կայուն կառավարում ջրատար հորիզոնների խիստ գերօգտագործմամբ առանձնացող տարածաշրջաններում՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության ազդեցությունները» գիտաժողով

Հուլիսի 2-5, 2019

ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ, Երևան, Հայաստան



2019թ. հուլիսի 2-5-ը ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտը Հելմհոլցի բնապահպանական հետազոտությունների կենտրոնի և Դարմշտադտի տեխնիկական համալսարանի հետ համատեղ Գերմանիայի կրթության և հետազոտությունների նախարարության աջակցությամբ իրականացրել է «Ջրային ռեսուրսների կայուն կառավարում ջրատար հորիզոնների խիստ գերօգտագործմամբ առանձնացող տարածաշրջաններում՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության ազդեցությունները» գիտաժողով, հետևյալ թեմատիկ ուղղություններով.

- ջրային ռեսուրսների կառավարում,
- ջրօգտագործում,
- ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցություն,
- հիդրոլոգիական և հիդրոերկրաբանական մոդելավորում,
- ջրի որակի գնահատում,
- ջրային տեղեկատվական համակագեր:

Թեզիսների հավաքածուն հասանելի է հետևյալ հղումով:

Գերմանիայից մասնակցել են Պրոֆ. Քրիստոֆ Շուեթ,

Դարմշտադտի տեխնիկական համալսարան https://www.geo.tu-darmstadt.de/.../mitarbeiter_details_geo_4...

Պրոֆ. Բերնդ Կլաուեր, Հելմհոլցի բնապահպանական հետազոտությունների կենտրոն <https://www.ufz.de/index.php?en=38771>

Կայ Կոնելեր, Հելմհոլցի բնապահպանական հետազոտությունների կենտրոն <https://www.ufz.de/index.php?en=40204>

Միքայել Շուբերտ, Հելմհոլցի բնապահպանական հետազոտությունների կենտրոն <https://www.ufz.de/index.php?en=38802>



TECHNISCHE
UNIVERSITÄT
DRESDEN

JUSTUS-LIEBIG-
UNIVERSITÄT
GIESSEN

"Էոլյան նստվածքները որպես անցյալի պալեոմիջավայրի փոփոխության արխիվ" միջազգային գիտաժողովի բացումը տեղի ունեցավ սեպտեմբերի 16-ին ՀՀ ԳԱԱ նախագահության կլոր դահլիճում, ՀՀ ԳԱԱ ԵԳԻ տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանի ելույթով, որին հաջորդեցին Դոմինիկ Ֆաուստի և Մարկուս Ֆուշի (Գերմանիա) ելույթները կապված էոլյան նստվածքների գերմանական ֆինանսավորման, ներկա և ապագա աշխատանքների և նախատեսվող հնարավոր ծրագրերի ներկայացմամբ: Այս ելույթներին հաջորդեցին գիտական զեկուցումները: Կոնֆերանսը շարունակվեց 17.09.2019թ, որի ընթացքում ներկայացվեց 30 զեկուցում, որից 2-ը հնագիտական ուղղվածության, 4-ը ներկայացվեցին պոստերների տեսքով, ևս 2 զեկույցներ հրավիրված մասնագետների (դր. Լևոն Եպիսկոպոսյան (մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտ) և դր. Համլետ Պետրոսյան (հնագիտության և ազգագրության ինստիտուտ) կողմից: Վերջում ներկայացվեց Հայաստանի տարածքի ընդհանուր երկրաբանությունը (զեկուցող՝ Լիլիթ Սահակյան) և 5-օրյա տեղային գիտական էքսկուրսիայի ուղիները (զեկուցող՝ Դանիել Վոլֆ): Տեղային էքսկուրսիայի ուղեցույցը տպագրվել է, հեղինակներն են (Daniel Wolf, Lilit Sahakyan, with contributions of T. Wolpert, Ch. Richter et al, 2019, 58 p.):

Գիտաժողովի 45 մասնակիցներից 39-ը արտասահմանից, 6-ը տեղացի մասնագետներ, ուսանողներ մասնակցել են նաև տեղային գիտական էքսկուրսիային: Էքսկուրսիան ներառում էր հնագիտական տեղավայրերի այցելություններ, ինչպես նաև էոլյան նստվածքների կտրվածքներ: Յուրաքանչյուր կտրվածքում ներկայացվել են կատարված աշխատանքները, որից հետո քննարկվել են ուսումնասիրման առաջարկությունները և ներկայացվել խորհուրդներ: Առաջին երկու օրերի այցելությունները իրականացվեցին Նոր Գեղի և Քաղսի հնագիտական տեղավայրերում, ինչպես նաև Քաղսի, Վարսեր, Իջևանում՝ Սևքար, Մարիգյուղ, Աչաջուր և BL (border line) կտրվածքներում, համանուն գյուղերի մոտ: Առաջին խումբը երրորդ օրվա տեղային էքսկուրսիան ավարտեց Գառնի-Գեղարդ այցելությամբ: Մշակութային այ-

ցելությունները ներառում էին նաև Մադմոսավանք և Սևանավանք համալիրները: Երթուղու ժամանակ մասնակիցներին մշտապես ներկայացվել է նաև Հայաստանի հարուստ երկրաբանությունը:

Երկրորդ տեղային գիտական էքսկուրսիան (20-22/09/2019թ) նախատեսում էր այցելություն Արցախի Հանրապետություն, որին մասնակցել են 19 օտարերկրյա և 7 տեղացի մասնագետներ (մեկը Արցախից), այդ թվում 5 ուսանողներ: ԱՀ-ում ներկայացվել են Սարսանգի, Մադավուզի, Լուսաձորի և Այգեստանի էոլյան կտրվածքները: Մասնակիցները այցելեցին Դադիվանք և Գանձասար համալիրներ: Կոնֆերանսի մասին Արցախ-1 հեռուստատեսությամբ հաղորդում, նկարահանվել և ցուցադրվել է երբ մասնակիցները գտնվում էին Լուսաձոր կտրվածքում:

Վերջին 5-րդ օրը, ՀՀ վերադարձի ճանապարհին, նախատեսված էր Տեղ գյուղի մոտ մերկացող էոլյան կտրվածքի ներկայացումը և Արենի-1 քարանձավ այցելությունը: Կոնֆերանսի շրջանակներում նոր համագործակցության հնարավորություններ առաջարկվեցին, կլիմայական փոփոխությունների ուսումնասիրություններն ավելի ընդգրկուն դարձնելու փաստարկներով:

Գիտաժողովը մասնակի ֆինանսավորվել է ԿԳՄՍ նախարարության Գիտության Կոմիտեի և ԱՀ Բեյս Մետալս հանքարդյունաբերական ընկերության կողմից:

Արտոբակությունից կարելի է ծանոթանալ հետևյալ հասցեով:
www.geology.am/files/conference%20book.pdf



2019թ. հոկտեմբերի 15-ին «**Բնագիտական թանգարանները՝ որպես գեոտուրիզմի զարգացման գործոն**» թեմայով միջազգային գիտաժողովը մեկնարկեց ՀՀ ԳԱԱ կյոռ դահլիճում: Այն նվիրված էր ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի Հովհաննես Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանի 80-ամյակին: Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը: Առաջին օրը ներկայացվեցին 11 գիտական, երկրորդ օրը 16 հանրամատչելի զեկույցներ: Հոկտեմբերի 17-18 գիտաժողովը շարունակվել է մասնակիցների այցելությամբ թանգարաններ, ինչպես նաև Արարատի տրավերտինի հանքավայր, «Խոսրովի անտառ» պետական արգելոց, «Թռչունների» քարայր, «Սևան» ազգային պարկ: Գիտաժողովի կազմակերպմանն աջակցել են Շրջակա միջավայրի նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը, Հայաստանի

հանքագործների և մետալուրգների միությունը, Դի Վի Վի ինթերնեյշնալ կազմակերպությունը:

Գիտաժողովի նյութերը կարելի է վերբեռնել այս հասցեով.
www.geology.am/files/Geotourism%20Conference%20book,%2015-18.2019,%20Armenia.pdf

ԵԳԻ աշխատակիցների մասնակցությունը արտասահմանյան գիտաժողովներում

Գեոդինամիկայի և երկրաբանական վտանգների լաբորատորիայի վարիչ **Արա Ավագյանը** 2019թ.-ի սեպտեմբերի 18-19 ելույթով մասնակցել է Վրաստանի Բաթումի քաղաքում տեղի ունեցած AAPG կոնֆերանսին **“Discover Why the Black Sea, Caucasus, and Caspian Region is Heating Up with E&P Activity”**: Մասնակցությունը մասամբ ֆինանսավորվել է ԵԳԻ կողմից:

Avagyan A., Sosson M., Sahakyan L., Sheremet Y., Vardanyan S., Atalyan T. Tectonic development of the Ararat Basin, Lesser Caucasus, Armenia. The American Association of Petroleum Geologists, Batumi, Georgia, 18-19 September, p. 2019.

Գեոդինամիկայի և երկրաբանական վտանգների լաբորատորիայի աշխատակից, ասպիրանտ **Մեղա Ավագյանը Հռոմում ելույթով մասնակցել է 34-րդ միջազգային նստվածքաբանական գիտաժողովին՝ կազմակերպված նստվածքագետների միջազգային ասոցիացիայի և Հռոմի Սապիենզա համալսարանի Երկրի մասին գիտությունների դեպարտամենտի կողմից: Մասնակցությունը ֆինանսավորվել է ՀՀ ԳԱԱ-ի և ԵԳԻ կողմից:**

Ara Avagyan, Seda Avagyan, Tatul Atalyan Interacting geological hazards in the Sevan Lake basin, 7.G The sedimentary record of earthquakes, tsunamis, and other extreme/catastrophic events -Conference detailed scientific program - IAS_ROMA 2019, 10-13 September, page 36. Sapienza University, Italy, Rome <http://iasroma2019.org/>

ԵԳԻ պետրոլոգիայի և իզոտոպային երկրաբանության լաբորատորիայի վարիչ **Ղազար Գալոյանը**, ԵԳԻ տնօրեն **Խաչատուր Մելիքսեթյանը** մասնակցել են Բարսելոնայում (Իսպանիա) կայացած Goldschmidt-2019 գիտաժողովին ելույթով՝

Gh. Galoyan, S.-L. Chung, R. Melkonyan, Y.-H. Lee, L. Atayan, R. Khorenyan, A. Grigoryan, N. Avagyan. Neoproterozoic-Early Cambrian, Late Paleozoic and Late Jurassic granitoid magmatism on the N margin of Gondwana, Tsaghkunyats anticlinorium of Lesser Caucasus, Central-Northern Armenia.

Meliksetian K, Sargsyan L, Sugden P, Tseng T-L, Savov I, Navasardyan G & Grigoryan E. Spatial Geochemical Variations of Quaternary

Collision Related Volcanism of Armenia Linked with Seismic Data on Regional Crustal Thickness.

ԵԳԻ Երկրաբանական տեղեկատվական լաբորատորիայի վարիչ **Ալեքսանդր Առաքելյանը** և նույն լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող **Նարեկ Տարասյանը** 2019թ. հոկտեմբերի 14-18-ը ՀՀ ԳԱԱ ԵԳԻ ֆինանսավորմամբ մեկնել են Մոսկվա՝ Information Technologies in Earth Sciences and Applications for Geology, Mining and Economy (ITES&MP-2019) միջազգային կոնֆերանսին բանավոր զեկույցներով հանդես գալու նպատակով: Ա. Առաքելյանի զեկույցի վերնագիրն էր "Open Access to Spatial Data and Knowledge IN Earth Sciences through Virtual Geoscientific Environment for Armenia", Ն. Տարասյանինը՝ "On the Software of Landslide Real-Time Automated Monitoring System":

Թեզիսները տպագրվել են կոնֆերանսի ժողովածուում, <http://ites2019.sgm.ru>

ԵԳԻ տնօրեն **Խաչատուր Մելիքսեթյանը** և հրաբխագիտության լաբորատորիայի աշխատակիցներ **Մերի Միսակյանը** և **Գևորգ Նավասարդյանը** 2019թ. հուլիսի 18-21-ը մասնակցել են Վրաստանի Դուշեթի քաղաքում տեղի ունեցած «Գետտուրիզմի հնարավորությունները Հարավային Կովկասում անդրսահմանային համագործակցության համար» միջազգային գիտաժողովին: Քննարկվել են երկրում գետտուրիզմի զարգացման և ազգային գեոպարկերի հիմնադրման հնարավորությունները և այդ առումով անդրսահմանային համագործակցությունը: Բոլոր ծախսերը հոգացել է հրավիրող կողմը:

2019թ-ի Սեպտեմբերի 9–30 հրաբխագիտության լաբորատորիայի գիտաշխատող **Լիլիթ Գևորգյանը** Ճապոնիայի Կոտո քաղաքում մասնակցել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարությամբ Ռիտցումեյկան համալսարանում կազմակերպված «Պատմամշակութային օջախների աղետների կառավարումը» թեմայով միջազգային ծրագրին: Մասնակցության բոլոր ծախսերը իրականացվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից: Ծրագիրը նախատեսված է աղետների կառավարման մասնագետներին ծանոթացնելու մշակութային օջախների խիստ առանձնահատուկ խնդիրներին, ինչի համար կազմակերպված էին հանդիպումներ Ճապոնիայի աղետների կառավարման տեղական և ազգային ծրագրերի համակարգողների հետ: Ծրագրի ընթացքում Լիլիթ Գևորգյանը ներկայացրել է ԵԳԻ Երկրաբանական թանգարանը, խնդիրներն ու կարևորությունը: Արդյունքում հրավիրող մասնագետների հետ միասին մշակվել է Երկրաբանական թանգարանի աղետների կառավարման պլան, որի արդյունքները ներկայացվել են ԵԳԻ Երկրաբանության թանգարանի 80-ամյակին նվիրված «Բնագիտական թանգարանները որպես գետտուրիզմի զարգացման գործոն» գիտաժողովում:

Ս.թ. հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 1-ը Անկարայի պետական համալսարանում տեղի ունեցավ «Caucasus Mountain forum 2019»

գիտաժողովը, որին մասնակցեցին 14 երկրի՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի Դաշնության, Իրանի, Նորվեգիայի, Շվեյցարիայի, Իտալիայի, Ավստրիայի, Էստոնիայի, Ուկրաինայի, Մեծ Բրիտանիայի, Սլովենիայի, Թուրքիայի ներկայացուցիչներ: ԵԳԻ-ից մասնակցել են **Միքայել Գևորգյանը, Հայկ Իգիթյանը, Էլյա Սահակյանը, Լիլիթ Գևորգյանը, Սուրեն Առաքելյանը**: Միջոցառման ընթացքում զեկուցումները նվիրված էին Կովկասյան տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացումներին, ջրային ռեսուրսների և մյուս էկոհամակարգերի պահպանմանը, սահմանային խնդիրներին, կլիմայի փոփոխությանը, կրթության և կայուն զարգացմանը, զբոսաշրջության զարգացմանը, կենսաբազմազանությանը և այլ հիմնահարցերին:

ԵԳԻ աշխատակիցների մասնակցությունը արտասահմանում կրթական ծրագրերին

2019թ.-ի մայիսի 30-ից հունիսի 10-ը Գեոարխետոլոգիայի և գեոմոնիթորինգի լաբորատորիայի գիտաշխատող **Հայկ Իգիթյանը** «Նիպպոն Կոեի» ընկերության հրավերով այցելել է Ճապոնիա, գետային նստվածքների կուտակման օրինաչափությունների, կառավարման և հնարավոր հեղեղներից պաշտպանման բնագավառում Ճապոնիայի մշակած և լայն կիրառում ունեցող նոր մեթոդաբանությանը ծանոթանալու համար: Մինչ այդ կազմակերպության աշխատակիցների հետ իրականացվել են աշխատանքներ Ազատ գետի նստվածքակուտակման օրինաչափությունները, գետի հնարավոր վարարումները, ջրի մակարդակի սեզոնային փոփոխությունները պարզելու նպատակով:

Առաջարկվել են նոր մոտեցումներ Ճապոնացի գործընկերների հետ Հայաստանում նմանատիպ ուսումնասիրությունների համար: Այցելության ընթացքում տեղի է ունեցել Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Ընկերության ներկայացուցչի հետ հանդիպում, ով դրական է գնահատել ծրագիրը:

2019թ.-ի հունիսի 17-28 **Հայկ Իգիթյանը** մասնակցել է Ժնևի Համալսարանի Բնապահպանական Գիտությունների Ֆակուլտետի և Միացիալ Ազգերի Կազմակերպության բնապահպանական ծրագրերի բաժնի կողմից կազմակերպված «Գեոմատիքս կայուն շրջակա միջավայրի համար» խորագրով վերապատրաստման ծրագրին: Ծրագրին մասնակցության դրամաշնորհը տրվել է Ժնևի համալսարանի կողմից, իսկ ճանապարհածախսը և կեցության ծախսերը ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը: Վերապատրաստմանը ներկայացվել են նոր ծրագրային և համակարգչային մոտեցումներ, որոնցով առավել արդյունավետ կարելի է լուծել երկրաբանական և բնապահպանական խնդիրները: Նմանատիպ ծրագրերից է InVEST-ը, որը թույլ է տալիս կլիմայի փոփոխությունից կախված հաշվարկել էկոհամա-

կարգային ծառայությունները և մշակել հետևանքների մեղմման ռազմավարությունը: Ծրագրի ավարտին Ժնևի Համալսարանի Բնապահպանական Գիտությունների Ֆակուլտետի դեկանի և Միացիալ Ազգերի Կազմակերպության բնապահպանական ծրագրերի բաժնի ներկայացուցիչների հետ քննարկվել են ՀՀ-ում ստացված գիտելիքների ներդրման, համատեղ ծրագրերի մշակման և Ժնևի համալսարանի ֆոնդից ֆինանսավորում ստանալու հարցերը:

ԵԳԻ Լիթուոգիայի և ռեգիոնալ երկրաբանության լաբորատորիայի աշխատակից **Քրիստինա Սահակյանը** 2019 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը մասնակցել է Գերմանիայի Էրլանգեն քաղաքի համաժողովում համալսարանում տեղի ունեցած «International Course of Organofacies Analysis - Sedimentary Organic Matter - Principles & Applications» կրթական ծրագրին: Ծրագիրը նախատեսված էր նրանց համար, ովքեր հետաքրքրված են նստվածքային ապարներում օրգանական նյութերի ուսումնասիրությամբ: Դասընթացը բաղկացած էր դասախոսություններից և մանրադիտակային լաբորատոր աշխատանքներից: Ծրագրի կազմակերպիչը Գերմանիայի Հայդելբերգ քաղաքում գտնվող GeoResources STC կենտրոնի գլխավոր երկրաբան Դր. Հարտմուր Յեգան է:

Այցելությունը մասամբ ֆինանսավորվել է ԵԳԻ կողմից: Ծրագրի ընթացքում ուսումնասիրվել են նաև Արցախի Քարին Տակ քարանձավի փիթի արևելյան պատից վերցված նմուշների ծաղկափոշին՝ պալեոմիջավայրի վերականգնման համար:

2019 թվականի նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 14-ը ԵԳԻ Լիթուոգիայի և ռեգիոնալ երկրաբանության լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող **Հայկ Հովակիմյանը** գործուղվել է Բուլղարիայի Գիտությունների Ակադեմիա, Երկրաբանության Ինստիտուտ (պրոֆեսոր Նադիա Օգնյանովա Ռումենովայի հետ համատեղ), դիատոմային ջրիմուռների ուսումնասիրություններ իրականացնելու համար: Ուղևորությունը ֆինանսավորվել է Գյուլբենկյան հիմնադրամի և ԵԳԻ կողմից:

ԵԳԻ հրաբխագիտության լաբորատորիայի աշխատակից **Մերի Միսակյանը** 2019 թվականի նոյեմբեր 18-ից դեկտեմբեր 17-ը գործուղվել է Գերմանիա (Գիսենի, *Յուստուս Լիբիգի համալսարան*) «Գեոպարկերը խաղաղության համա՞ր. Գետտուրիզմի հնարավորությունները Հարավային Կովկասում անդրսահմանային համագործակցության համար» DAAD ծրագրի շրջանակներում:

Նպատակը՝ տեսական և գործնական ներդրում ունենալ ծրագրին առնչվող նպատակներում՝ կապված գեոպարկերի հիմնադրման և կառավարման հետ, հատուկ ուղղվածությամբ անդրսահմանային գեոպարկերի վրա: Բոլոր ծախսերը հոգացել է հրավիրող կողմը:

**ՌԱՖԻԿ ՏԻԳՐԱՆԻ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ
(1932-2019)**



2019թ. նոյեմբերի 9-ին կարճատև հիվանդությունից հետո վախճանվեց ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի վաստակաշատ գիտնական, կիրառական երկրաֆիզիկայի ոլորտի ճանաչված մասնագետ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու Ռաֆիկ Տիգրանի Միրիջանյանը: Ռ.Միրիջանյանը ծնվել է 1932թ. նոյեմբերի 11-ին, Գյումրի (Լենինական) քաղաքում: 1956թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի երկրաֆիզիկայի բաժինը և իր աշխատանքային գործունեությունը սկսել Հայաստանի Երկրաբանական վարչության համակարգում: 1976թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1956-89թթ. եղել է ՀՀ երկրաբանական վարչության երկրաբանա-երկրաֆիզիկական արշավախմբի գլխավոր երկրաֆիզիկոս, 1989-94թթ.՝ ՀՀ հանքային ռեսուրսների նախարարության ռեգիոնալ երկրաբանության, երկրաֆիզիկայի, նավթի ու գազի վարչության պետ, 1995-2000թթ.՝ ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության ճգնաժամային կառավարման հարցերի ինստիտուտի դոցենտ:

2003թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ ԵԳԻ-ում որպես ավագ գիտաշխատող:

Բարձր պրոֆեսիոնալիզմ և բարեխիղճ աշխատանք, սրանք այն կարևոր գծերն են, որոնք մեծ հարգանք ու հեղինակություն են բերել Ռ.Միրիջանյանին:

Լայն են նրա գիտական հետազոտությունների շրջանակները՝ ընդհանուր երկրաֆիզիկա, հորատանցքային, միջուկային երկրաֆիզիկա, երկրաջերմություն, սեյսմաբանության որոշ հարցերի երկրաֆիզիկական մեկնաբանումներ և այլն:

Նշանակալի է Ռ.Միրիջանյանի գիտական ու արտադրական գործունեությունը ընդերքի հետազոտման ու ուսումնասիրության ոլորտներում: Հանրապետության տարածքում հորատանցքերի երկրաբանա-

կան կտրվածքների երկրաֆիզիկական ուսումնասիրությունների հիմնադիրներից ու կազմակերպիչներից է: Անմիջական մասնակցություն է ցուցաբերել մետաղային օգտակար հանածոների, հանքային ու քաղցրահամ ջրերի, խորքային երկրաբանական կառույցների, նավթի ու գազի կուտակումների որոնողական և հետախուզական հորատանքների ուսումնասիրման երկրաֆիզիկական մեթոդների ներդրման ու կիրառման, արդյունքների երկրաբանական մեկնաբանմանն առնչվող աշխատանքներում:

Ակնհայտ է Ռ.Միրիջանյանի ավանդը Հայաստանում միջուկային երկրաֆիզիկայի ծավալման գործում, հատկապես կտրվածքներում նեյտրոնային մեթոդներով ածխաջրածինների հայտնաբերման, ինչպես նաև բնական վիճակում լեռնային փորվածքների պատերին ու առանձին նմուշներում փնտրվող օգտակար տարրերի առկայության ու պարունակության ճառագայթաչափային մեթոդներով որոշման ոլորտներում: Լայն ճանաչում ունեն Ռ.Միրիջանյանի ընդերքի ջերմությանը վերաբերվող ուսումնասիրությունները. Հայաստանի երկրաջերմային պայմանների նկարագրություն, ջերմային դաշտերի բնութագրեր, չափորոշիչների բաշխման օրինաչափությունների բացահայտումներ, երկրաջերմային հանքավայրերի որոնման հեռանկարների գնահատումներ:

Ուշադրության է արժանի Ռ.Միրիջանյանի մասնակցությունը Մերձերևանյան շրջանի աղաբեր նստվածքների սահմաններում ստորգետնյա գազային շտեմարանների որոնման, ինչպես նաև շինարարության ու շահագործման ընթացքում տեխնոլոգիական վերահսկման երկրաֆիզիկական մեթոդների մշակման և իրականացման աշխատանքներում: Ցանկացած երկրի համար, իսկ հանածո վառելիքաէներգետիկ ռեսուրսներից զուրկ Հայաստանի համար հատկապես, գազամբարների առկայությունը դժվար է գերազնահատել: Հայաստանի անկախացումից հետո Ռ.Միրիջանյանը մատուցել է փորձագիտական ու խորհրդատվական ծառայություններ Համաշխարհային Բանկին, մի շարք արտերկրյա ընկերությունների, որոնք Հայաստանում նավթի ու գազի, երկրաջերմային էներգիայի ռեսուրսների գնահատմանն ու հանքավայրերի որոնմանն ուղղված գործունեություն են ծավալել: Ռ.Միրիջանյանը ավելի քան 30 գիտական հոդվածների հեղինակ է, որոնցից շատերը ունեն ոչ միայն գիտական, այլ նաև կիրառական նշանակություն: 1979-2018թ. Ռ.Միրիջանյանը եղել է ՀՀ ԳԱԱ Գիտություններ Երկրի մասին տեղեկագրի խմբագրական կոլեգիայի անդամ:

Նա երկար տարիներ դասավանդել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում և մեծ ավանդ ունեցել երկրաֆիզիկայի ոլորտի բարձրորակ կադրերի պատրաստման գործում: Այսօր նրա սաներից շատերը երկրաֆիզիկայի ոլորտի ճանաչված մասնագետներ են:

ՀՀԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն

ԲՆԱԳՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրում հրատարակվում են Հայաստանում և արտասահմանյան երկրներում **երկրաբանության, երկրաֆիզիկայի, սեստրոգիայի, լեռնային գործի, էկոգեոքիմիայի, ֆիզիկական աշխարհագրության** և Երկրի մասին գիտությունների այլ ասպարեզներում տարվող տեսական, փորձարարական և կիրառական հետազոտությունների արդյունքները:

Հոդվածները ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզվով, տպագրության համար պատրաստ վիճակում, հրատարակման թույլտվության և ուղեկցող նամակի հետ միասին: Տեղեկագրում բոլոր հրատարակումները առանց հոնորարի են:

2. Հոդվածի ծավալը, ներառյալ պատկերները, որոնց թիվը չպետք է անցնի 3-ից, ներառյալ “ա”, “բ” և այլն, աղյուսակները, ամփոփագիրը, օգտագործված գրականության ցանկը, պետք է կազմի մոտ 12 էջ: Տեքստը անհրաժեշտ է պատրաստել Microsoft Word-ով GHEA GRAPALAT տառատեսակի օգտագործմամբ, 12 չափով և 1.5 ինտերվալով, առանց տողադարձերի: Դաշտերը պետք է լինեն. Ձախից՝ 3սմ, վերևից և ներքևից՝ 2.5 սմ և աջից՝ 1 սմ: Հոդվածը ներկայացվում է 2 օրինակով, յուրաքանչյուրը հեղինակի (հեղինակների) ստորագրությամբ և էլեկտրոնային տարբերակով, CD սկավառակի վրա:

Պատկերները, լուսանկարները և աղյուսակները, համարակալման և բացատրագրերի հետ միասին, պետք է լինեն սև-սպիտակ, A4 ֆորմատից ոչ մեծ և պարզ ընթերցելի: Պատկերների համակարգչային տարբերակները պետք է լինեն *.bmp, *.tif կամ *.pcx ֆորմատներով, 200-600 dpi ընդարձակմամբ (կետ/դյույմ):

3. Հեղինակները պետք է հետևեն ամսագրերում հոդվածների տպագրման ընդունված կարգին. հոդվածի վերնագիրը, հեղինակի (հեղինակների) անվան- հայրանվան սկզբնատառերը և ազգանունը (ազգանունները), կազմակերպությունը և հասցեն, ներառյալ E-mail-ը (եթե համահեղինակները տարբեր կազմակերպություններին են, բերվում են բոլորի հասցեները՝ կապակցված աստղանիշով), հոդվածի անոտացիան (8-10 տող), հիմնաբառերը (7-9 բառ): Ապա հետևում են հոդվածի հիմնական տեքստը, **պարտադիր նշելով հոդվածի տպագրման նպատակը և գիտական նորությունը**, ամփոփագիրը ռուսերեն (հայերեն) լեզվով և անոտացիան անգլերեն լեզվով:

4. Օգտագործված գրականությունը բերվում է ընդհանուր ցուցակով՝ **առանձին էջի վրա**: Հեղինակների ազգանունները գրվում են այբբենական կարգով (առաջինը՝ հոդվածի լեզվով, ապա հայերեն կամ ռուսերեն, վերջում՝ արևմտաեվրոպական լեզուներով): Տեքստում մեջբերվող հղումը բերվում է կլոր փակագծերում, հեղինակի միայն ազգանվան նշմամբ, բնօրինակի լեզվով, եթե հեղինակները երկուսից ավելի են, նշվում է առաջին համահեղինակի ազգանունը և այլն, ապա՝ հրապարակման տարին:

5. Մեջբերվող գրականության ցանկը ձևավորվում է հետևյալ կերպ. ա) գրքերի համար նշվում են հեղինակի (հեղինակների) ազգանունը և անվան-հայրանվան սկզբնատառերը, հրատարակման տարեթիվը, գրքի լրիվ անվանումը, որտեղ է հրատարակվել, հրատարակչությունը, էջերի քանակը; բ) ամսագրային հոդվածների համար՝ հեղինակի (հեղինակների) ազգանունը և անվան-հայրանվան սկզբնատառերը, հրատարակման տարեթիվը, հոդվածի լրիվ անվանումը, ամսագրի անվանումը՝ համաձայն ընդունված հապավումների, հատորը, ամսագրի կամ թողարկման համարը, էջերը; գ) գրքերում (հավաքածուներում) զետեղված հոդվածների համար՝ հեղինակի (հեղինակների) ազգանունը, անվան-հայրանվան սկզբնատառերը, հրատարակման տարեթիվը, գրքում հոդվածի լրիվ անվանումը (....., գրքում), գրքի անվանումը, որտեղ է հրատարակվել, հրատարակչությունը, էջերը; դ) սեղմագրերի համար՝ հեղինակի ազգանունը, անվան-հայրանվան սկզբնատառերը, ատենախոսության անվանումը՝ համաձայն ընդունված հապավման (օրինակ՝ երկրաբ.-հանր.գիտ.թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր), քաղաքը, կազմակերպությունը, որտեղ կայացել է պաշտպանությունը, տարեթիվը, էջերի քանակը:

6. Թվարկված պահանջներին չբավարարող հոդվածները չեն ընդունվում:

7. Մրբագրումից հետո լրացումներ չեն արվում:

8. Խմբագրության կողմից հոդվածի մերժման դեպքում հեղինակին վերադարձվում է բնագրի 1 օրինակը և խմբագրությունն իրեն է վերապահում հոդվածի մերժման պատճառների մասին բանավեճ չվարելու իրավունքը:

ПРАВИЛА ОФОРМЛЕНИЯ РУКОПИСИ

1. В журнале сер. “Науки о Земле” Известий Национальной Академии наук Республики Армения публикуются результаты теоретических, экспериментальных и прикладных исследований, проводимых в Армении и зарубежных государствах в области **геологии, геофизики, сейсмологии, горного дела, экогеохимии, физической географии** и в других направлениях наук о Земле. Статьи представляются на армянском, русском или английском языке в окончательно подготовленном виде вместе с сопроводительным письмом и разрешением на опубликование. Все публикации в журнале безгонорарные.

2. Объем статьи, вместе с иллюстрациями, число которых не должно превышать 3, включая “а”, “б” и т.д., таблицами, резюме, библиографией должен составлять около 12 страниц. Текст должен быть подготовлен в редакторе Microsoft Word с использованием шрифтов TIMES NEW ROMAN размером 12 и распечатан в интервале 1.5, без переносов с полями (слева – 3.0 см, сверху, снизу – 2.5 см, а справа – 1.0 см). Статья представляется в 2-х экземплярах распечатки, подписанных авторами, а также в электронной версии на диске CD.

Рисунки, фотографии и таблицы вместе с нумерацией и подписью должны быть черно-белыми, форматом А4 и четко выполнены. Компьютерный вариант рисунков должен быть в формате *.bmp, *.tif или *.pcx с разрешением 200-600 dpi (точек на дюйм). Подписи прилагают на отдельной странице и оформляются согласно требованиям.

3. Авторам следует придерживаться общепринятой в журнале схемы статьи: название статьи, инициалы и фамилия автора (авторов), организация и адрес, включая E-mail (если соавторы из разных организаций, то приводятся адреса всех, привязанные сносками через звездочку); аннотация статьи (8-10 строк), после аннотации ключевые слова (7-9 слов), основная часть текста, **с обязательным указанием цели и научной новизны статьи**, резюме на русском (армянском) языке и аннотация на английском языке.

4. Литература приводится общим списком **на отдельной странице**. Фамилии авторов располагаются по алфавиту (вначале на языке статьи, затем армянские или русские, в конце западноевропейские). В тексте ссылка на литературу приводится в круглых скобках с указанием фамилии автора без инициалов, в оригинальной транскрипции, а если авторов более двух, то указывается фамилия первого соавтора и др., затем год издания.

5. Список цитируемой литературы оформляется следующим образом: а) для книг указывают фамилию автора (авторов) и инициалы, год издания, полное название книги, место издания, издательство, количество страниц; б) для журнальных статей – фамилия и инициалы автора (авторов), год издания, полное название статьи, название журнала согласно принятому сокращению, номер тома, номер журнала или выпуска, страницы; в) для статей в книгах (сборниках) – фамилия и инициалы автора (авторов), год издания, полное название статьи в книге (пишется В кн.: “.....”), название книги, место издания, издательство, страницы; д) для авторефератов – фамилия и инициалы автора, название со ссылкой согласно принятому сокращению (Автореф. дисс. на соиск.уч.ст.канд. или доктора наук), город, организация, где состоялась защита, год, количество страниц.

6. Статьи, не отвечающие перечисленным требованиям, не принимаются.

7. Дополнения в корректуру не вносятся.

8. В случае, если статья отклонена редакцией, автору возвращается один экземпляр рукописи, и редакция оставляет за собой право не вести дискуссию по мотивам ее отклонения.

MANUSCRIPT PREPARATION GUIDELINES

1. Earth Sciences Series journal of the Proceedings of the National Academy of Sciences of the Republic of Armenia publishes results or theoretical, experimental and applied research conducted in Armenia and abroad in the field of **geology, geophysics, seismology, engineering seismology, mining, eco-geochemistry, physical geography, etc.** **Articles are submitted** in Armenian, Russian, or English as finally ready manuscripts enclosed with a cover letter and letter or authorization for publishing. All publications in the journal do not provide for any royalties.

2. Article volume, including maximum 3 illustrations with a, b, etc., tables, abstract, and list of references, shall total to about 12 pages. Texts shall be prepared in Microsoft Word editor with 12-point TIMES NEW ROMAN and printed 1.5-spaced without hyphenation. Text margins shall be set 3.0 from the left, by 2.5 cm from the bottom and top, and 1.0 cm from the right. Article manuscript shall be submitted in two printed copies signed by the authors, and as an electronic copy on CD disk.

Figures, photos and tables, numbered and with captions, shall be black-and-white in A4 format and of good quality. Electronic version of figures shall be in *.bmp, *.tif or *.pcx format with resolution of 200-600 dpi (dots per inch). Figure captions are attached on a separate page and formatted according to the requirements.

3. Authors shall adhere to the following template common for all articles in the journal: article title, initials and surname of author(-s), affiliation and address, including e-mail (if authors have different affiliations, asterisked addresses for all must be placed in the footnote), abstract (about 8-10 lines), key words (7-9 words), body text with **mandatory indication of the purpose and scientific novelty** of the article, summary in Russian (Armenian) and abstract in English.

4. References should be listed on a **separate sheet**. The authors' surnames should be given alphabetically in the origin language of the article and followed by the Armenian or Russian, and then by the West-European). All citations in the text should have references in parentheses and include author's surname without initials, in original transcription and the year of publication. In case of two and more authors, the first author's surname followed by *et al* and the year of publication should be provided.

5. List of References is formatted as follows: a) author(s)' surname(s) and initials, year of publication, complete title, place of publication, publisher and number of pages are given for books; b) author(s)' surname(s) and initials, year of publication, complete article title, journal title in standard abbreviation, volume number and issue number, followed with number of pages, are given for journal articles; c) author(s)' surname(s) and initials, year of publication, complete article title followed by "In: " ... book title...", place of publication, publisher and number of pages are given for articles in books (article volumes); d) author's surname and initials, title and standard abbreviation for thesis abstracts (thesis abstract for the degree of Candidate, or Doctor of Geology and Mineralogy), year, city, thesis defense institution, and number of pages.

6. Articles not meeting the listed requirements are not accepted.

7. No additions are introduced into proofs.

8. If an article is rejected by editors, one copy of manuscript is returned to the author and editors reserve the right not to enter into discussion on the reasons for such rejection.

Подписано к печати 04.12.2019 г. печ. л. 6,25. Заказ N 984

Бумага офсетная 1. Тираж 150 экз. Цена договорная.

Издательство "Титутюн" НАН РА. 0019, Ереван, пр.Маршала Баграмяна, 24г.